


ԹԱԴ. ԱՎԴԱԼԲԵԳՅԱՆ

ՀՈՎՅԱՆՆԵՍ ՀՈՎՅԱՆՆԻՍՅԱՆ

ԳՐԱԿԱՆ-ՊԱՏՄԱԿԱՆ ՎԵՐԼՈՒՆՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ 1934




ՔԱԴ. ԱՎԴԱԼԲԵԳՅԱՆ

891.99.092 [Համալսարան]

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

A 50523
33505

ԳՐԱԿԱՆ-ՊԱՏՄԱԿԱՆ ԿԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ



ՅԵՐԵՎԱՆ 1984

Գեորգիայի ապարան

Գլուխ 195

Գաղտնի 1357

Տիրամ 360

ԲԱՆԱՍՏԵՂՄԻ

Ք Ն Ն Դ Յ Ա Ն ՅՈԹԱՆԱՍՆԱՄՅԱԿԻ

(1864—1934)

ՈՒ

Մ Ա Հ Վ Ա Ն ՀՆԳԱՄՅԱԿԻ

(1929—1934)

ԱՌԹԻՎ :

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Յ Ց ՈՒ Ն

Յ Ե Ր Ե Ս

I	Հայ գրականութեան յերեք պարբերաշրջանը	7
II	Բանաստեղծի կյանքի ուրվագիծը	10
III	Գրական գործունեությունը	13
IV	Ազգայնական դավանանք	20
V	Թախծերգի հանրային արժանները	22
VI	Առանց ոտարակերության	24
VII	Դիմուկդումների պտուտահորձանում	28
VIII	Սցիլլա ու Խարիրդա	32
IX	Կայծերի բերթան ու պատմագրական դեմոկրատիզմը	36
X	Գյուղը վերկավայր	42
XI	Հողի վշտի մեհանվագը	47
XII	Սիրերգի առարկան քաղքենուհի	49
XIII	Ազգասեր գրուհին կանացի իդեալ	52
XIV	Սցիլլական հակամարտություններին ի տես	55
XV	Խեղճասիրության լուսպեն-դրաշով	58
XVI	Կովի փոխարեն՝ սերը համադարման	60
XVII	Հլու հաշեցյալից դեպի ըմբոս Շարայվածը	62

В темнице выросло дитя,—
Ему ли петь о блеске дня,
О шуме волн, просторе поля?...
Бледна, убога песнь моя,
Как ты, моя слепая доля!...

С. ФРУГ.

I

Հայոց գրականութիւնը դարձացման յերեք պար-
րերաչքջան և ունեցել:

Ամբողջ միջնադարում ու նորադարի առաջին հա-
րյուրամ յակններում մեր գրականութիւնը յեղել և աչ-
խարհիկ ու հոգևոր կարգաձառներ ազնոյապահանութեան
գրականութեան:

19-րդ դարի վերջերին ու 20-րդ դարի սկիզբներին
ծաղումն և առնում հայ բանվորական գրականութիւ-
նը՝ մեջտեղ հանելով յուր մամուլը, հրատարակախո-
սութիւնը, վիպական գրվածքներն ու բանաստեղծու-
թյաւնները, գրականագիտութիւնն ու պատմական ու-
սումնասիրութիւնները:

19-րդ դարը հայ «3-րդ դասի» գրականութեան վոս-
կեղարն և, յերբ հանդես են գալիս նրա մեծապույն
խղերոյողները, վորոնց կարասպետներին մենք հանդի-
պում ենք դեռևս 17 ու 18 դարերում*): 17-րդ դարում

* Հասկանալի յե, վոր Հայաստանում ինչպես առետուրն
ու առետրական կապիտալն իբրև մասնակի յերևույթ, այնպես
և նրանց մասնակի ազդեցութիւնը գրականութեան վրա՝ յե-
ղել են շատ հնուց: Դեռևս վաղ միջնադարում Աղաթանկեղո-
սի տաղարանը ջատագովում ևր պերճանքի իրերի առետուրը:

գրականութեան մեջ վտար և զնում անդրանիկ հայ մատենագիրը բուրժուական շրջանից — Չաքարիա Ազուլեցին յուր մեծարժեք «Որագրութեամբ» : 18-րդ դարում, յերբ հայ բուրժուական մեկիքները ու կաթուղիկոսները կողքին առաջին անգամ զնում և յուր նշանավոր քաղաքական գործիչներին, հորիզոնում նակիրբև հեղինակ յերևում են Պետրոս Գիլանենցն ու ապա Հովսեփ Եմինը : Վերջապես նույն դարումն և, վոր յերկու մեծ գործիչներ հնդկահայ դպրութեան հիմքը դնելով՝ բաց են անում հայ գրականութեան մի վայելուն և Չիքանսահայ մեծ հեղափոխութեանից ևլ առաջ՝ հայ բուրժուականի անդրանիկ խոշոր թևորեակները հանդիսանալով :

18-րդ դարի այս զույլ գործիչներից մեկը Եսահաճիք Եսահաճիքյանն և, «Վորոգայթ Փառացին» ու «Նշավակի» նորահայտ հեղինակը, իսկ մյուսը Մովսես Բաղրամյանը, վորի գրչին և պատկանում «Հորգորակը» :

Այս վերջին աշխատութեանը, վոր լույս և տեսել Հնդկաստանի Մադրաս քաղաքում 1772 թվականին,

Ուշ միջնադարում Գրիգոր Տաթևացին ընդհանուակը խարաղանում եր առևտուրն ու վաճառականին՝ կրթակ կամ կղզակ բառն ստուգարանելով իրբև հողի բակը : Մինչև անգամ բուրժուա բառի մուտքը հայերենի մեջ յեղել և ավելի քան 500—600 տարի առաջ : Այս բառը «բուրժեա» ու «պուրժեա» ձևերով գործ և անվել կրիկիտահայ դրականութեան մեջ («Թե բուրժեա ընի մեր կամ թե բնակիչ երկրիս» : Լևոն Դ-ի 1330 թ. նոյեմբերի 24-ի պարզեակիրը Սիկիլիայի վաճառականներին. տես Ալիշան «Սիսուան», Վենետիկ, 1885, էջ 364ա : «Փառաւոր խոճանոյր և պուրժեապոյ, իմաստուն վաճառականաց» : 1390 թ. սղոստոսի 18-ի կոնդակ, Կրիկիտայի ուղարկված լեհահայերին. Ալիշան «Կամենից», Վենետիկ, 1896, էջ 9 : Հ. Աճառյանի հոյակապ «Արժատական բառարանը», Ե. հատոր, էջ 1137, ունի այս բառի «պուրժեա» փոփոխակը :) Որոս նշանակալից և, վոր բուրժուա բառի կղզին կոմժուա բառն ևլ դեռ կրիկիտայ շրջանում և մանկ մեր դրականութեան մեջ : («Եւ թե ճընուվեկ մեանի ան-

վոչ միայն կարևոր պատմագրական մատյան և ու ազատագրական յերկ, այլև անդրանիկ նմուշն և հայ բուրժուական ազգայնական հանրային-քաղաքական պոեզիայի:

Ի՞նչ եր քարոզում «Հորդորակը»—հայ նորածագ Հայր դասին» այս «Պարսիան»:

— Միջնադարյան տոհմի տեղ՝ նորադարի ազգայնություն, ազնվական պատակոտումների տեղ՝ բուրժուական միաձուլություն, ասիական անշարժության փոխարեն՝ յնչրոպական վերածնություն, անդեկ արտագաղթի փոխարեն՝ կաղմակերպված վերադարձ, անորեն ինքնակալության տապալմամբ որինակարգ սահմանադրություն ու նկուն աղոթքի կողքին՝ ըմբոսառազմերդ:

Ընդհանուր դժերով հենց այս գաղափարներն էլ կազմել են հայ ազգայնական գրականության ու պոեզիայի բովանդակությունը: «Հորդորակից» են ընձյուղում հայոց նոր կրականության ազգայնական յերկերը ֆրանսական մեծ հեղափոխությունից սկսած մինչև վերջին համաշխարհային պատերազմը:

Նույն այս հոսանքի ներկայացուցիչ և մեր նոր

տիաթիկ, նայ մեր դործաւորքն յիր իրքն ձեռնամուխ չլինին, սպայ զիրքն գոււլիմն առնու և այնէ, զինչ սահմանն է»։ Լեւոն Բ—ի 1288 թ. գեկանբերի 23—ի պարզեազիրը Ձենովայի վաճառականներին. Ալիշան «Միսուան», 388ա: Ալիշանը 387ա էջի յերկրորդ ծանօթագրությամբ արդեն քացատրել և, թե դումին նշանակում և «հասարակություն, Comune»: Սեռականարականը նույն վավերագրում միշտ լինում և «գումնին». «Պարզեկեցաք աստուծահաստատ գումնին ճնուվիղացն», «աստուծայպահ գումնին ճնուվիղացն», «դառնայ ի գումնին ձեռք»: Լեւոն Գ—ի սիկիլիացիներին տված վերոհիշյալ պարզեազրում պահված և այս բառի մի ուրիշ փոփոխակ. «Աւտար նաւ կամ թե աւտար դէմնի մարդ կամ ըռզակ չառնուն հեա իւրեանցն, որպես Միծիլիան խլըսեն». Ալիշան «Միսուան» 384ա: Աճառյանի «Արմատականը» չունի «գումնին» բառը:)

գրականութեան մեջ բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանն էլ: Հայ Զորդ դասի պոեզիայի նույն դարաւոր բնից արձակված չիլեր են նաև նրա «Բանաստեղծութեանները»:

II

Հովհաննես Հովհաննիսյանը ծնվել է Վաղարշապատ ամառուժ 1864 թվականի մայիսի 8-ին (հին տոմարով ապրիլի 26-ին):

Մազուժով գյուղացի էր, շինական ընտանիքի գաւաի: Հորական պապը գյուղական արհեստավոր էր, նրան ասում էին դերձիկ Վարդան: Հայրը, բնիկ վաղարշապատցի, Մկրտիչ Վարդանյան Հովհաննիսյանը, յերկրագործ էր, գրագետ: Մայրը, վաղարշապատցի Անուշիկ Տեր-Մեսրոբյանը, տնտեսուհի էր, անգրագետ: Հորեղբայրը, Հովհաննես անունով, վաղ միայն գրագետ էր, այլև փոստանավորներ էր հորինում: Վաղամեռ այս յերիտասարդի անունով էր, վաղ ծնողները կոչեցին իրենց անգրանիկին—նորածին բանաստեղծին:

Հովհաննիսյանը գրաճանաչութեանը սովորել է հորից: Վեց տարեկան մտնելով Վաղարշապատի ծխական ուսումնարանը՝ սկզբնական ուսումն առնում է այստեղ: Մի տարի էլ կարդում է Գայիանեյի նորարաց դպրոցում, փորի դասատու վարիչն էր գիտնական Վահան Բաստամյանը—Մխիթար Գոչի «Դատաստանագրքի» ուսումնասիրողն ու հրատարակիչը: Այնուհետև Հովհաննեսին տալիս են Յերևանի պետական պրոպիանադիան, փորակը սովորում է մինչև 1877 թվականի սեպտեմբերի վերջերը:

Վորդու ուսման հետագա ծախսերը հոգայու հնարավորութեան չունենալով՝ հայրը դիմում է Մոսկվա, Լաղարյան ձեմարանի վարչութեանը և հաջողեցնում է սղային ընդունել տալ գիշերոթիկ աչակերտի թեկնածու: Մի առ ժամանակ հետալուր է ստացվում, փոր

յերեխային ուղարկեն Մոսկվա՝ Լազարյանում ուսումը շարունակելու :

Հովհաննիսյանը տասներեք տարեկան եր, յերբ հտատարվեց նրա աղաղայի համար վճռական նշանակութուն ունեցող այս տեղափոխությունը : 1877 թվականի աշնանը նա հասնում է Մոսկվա և ընդունվում Ճեմարանի 3-րդ դասարանը : Հաջողութամբ հեռեկրով դատրնթացներին՝ 1883 թվականին ամարտում է Լազարյան ճեմարանը՝ ցույց տված առաջադիմության համար ստանալով արծաթյա մեդալ : Նույն տարվա սեպտեմբեր մտնում է Մոսկվայի համալսարանը՝ մասնագիտություն ընտրելով սլաոմա-բանասիրական ճյուղը : Այստեղ էլ հենց վերջացնում է համալսարանական կրթությունը 1888 թվականին և ստանում համապատասխան վկայական, վորի տակ սլաոմաբանասիրական Ֆակուլտետի գեկտնի փոխարեն ստորագրել է ուսաց հռչակավոր սլաոմարան Վասիլիյ Կլյուչևիսկին :

Տասնութեկ տմբի յե մնում Հովհաննիսյանը Մոսկվայում և այս ժամանակամիջոցում լիովին կաղմակերպվում է իրրե անձնավորություն ու հեղինակ : Նա Մոսկվա մտնում է, վորպես մի սովորական գյուղացի աղա, իսկ յերբ 1888 թվականին, 24 տարեկան հասակում, թողնում էր մայրաքաղաքը, նա այնտեղից դուրս եր գալիս իրրե հայ գրականության մեջ արդեն հռչակված ու մեծ հույսեր տվող բանաստեղծ, լեզվագիտական ու մանավանդ գրականագիտական այնպիսի կրթությամբ ու պաշարով, վոր քչերն են ունեցել հայ արվեստագործներից :

1888 թվականից սկսվում է բանաստեղծի կյանքի մի նոր շրջան : Այն տարվա աշնանը հրավիրվում է յուր ծննդավայրը, Վաղարշապատ, Գեվորգյան ճեմարանի ուսուցիչ : Այստեղ էլ մնում է մինչև 1912 թվականի ամառը : Քառորդ դար տեող այս շրջանում միմիայն կարծ ժամանակով 2 անգամ (1891—4 ու 1900—1 թ.) փոխադրվում է Թիֆլիս ուսուցչի ու տեսչի պաշտոնով,

բայց չուտով ելի վերադառնում և վաղարշապատ՝ դասավանդելը շարունակելու Գևորգյան ճեմարանում: Այս տարիներում հիշատակելի կենսադրական դեպքն այն է, վոր բանաստեղծը 1889 թվականի ամռանը Յեվրոպայե անցնում շրջագայելու՝ այցելելով Փարիզի միջադրային ցուցահանդեսն ել:

Վաղարշապատում բանաստեղծը մեծ հասակում ապրել և մոտ 25 տարի (հիշյալ ժամանակաշրջանում 22 տարի ու յերեք տարի յեւ հետո, 1919—1922 թվականներին): Այս քառորդ դարը բոլորովին ուրիշ ազդեցութուն և ունեցել նրա տաղանդի դարգացման վրա: Հետ ընկած ավանի գորշ կյանքը նպաստավոր պայմաններ չունեի այնպիսի կահուղ կամ քի, հեղ բնավորության ու բանաստեղծական մեղմ խառնվածքի համար, վորպիսին ուներ Հովհաննիսյանը: Եջմիածնի արեղայական տաղտուկ մթնոլորտը և Վաղարշապատի մանրիկությունը՝ ունեցան ու մանրիկ-չինովնիկական տափակ միջավայրը մի կատարյալ թաղթաղուկ եր, վորն աննկատելի կերպով դեպի յուր խորքերն եր քաշում մի փայլուն տաղանդ: Խաչատուր Աբովյանին փրկեց վոչ միայն Դորպատը, այլև այն, վոր Եջմիածինը ձևքերը թափահարելով հրաժարվում եր նրանից և հեռու վանում նրան: Հովհաննիսյանն այս կողմից ավելի անբախտ դուրս յեկավ: Նրան մարդ ու բանաստեղծ դարձրեց Մոսկվան, բայց նրա տաղանդի ու աշխարհայացքի դարգացումը վտանդվեց շնորհիվ այն հանդամանքի, վոր Եջմիածինը յուր կրծքին շատ պինդ եր սեղմում պոետին: Բանաստեղծի ծննդավայրի հասարակական մթնոլորտը նրա դրական վայրեջքի պատճառը յեղավ: Հայոց դրականության պատմության տխրալի եջերից մեկն ել այն և հիշվելու անշուշտ, վորտեղ պատմվելու յե, թե ինչպես հայ աշխարհարառ պոետիայի ալախոտիկ վարպետը Եջմիածնի սինոդի ատենադպիրը դարձած՝ տարիներ շարունակ յուր որերը մթնացնում եր կղերանոցի սքեմավորներին հետ վանական նիստերին մասնակցելով կամ թե

20-րդ դարում հաս ու չհասի մասին դրարառ արձանագրութիւններ կաղմելով:

1912 թվականի ամռանը Հովհաննիսյանը քաղաքային ուսումնարանական հանձնաժողովի նախագահի պաշտոնով փոխադրվում և Բագու, փորտեղ մնում և մինչև 1918 թվականը: Այն տարվա մայիսին քաղաքական հայանի իրադարձութիւնները հետևանքով անցնում և Հյուսիսային կովկաս, փորտեղ մնալով մեկ տարի՝ 1919 թվականին փերդաւանում և յուր հայրենի գյուղը՝ այստեղ հայկական միջնակարգ դպրոցի վարչի պաշտոն ստանձնելով: 1922 թվականին վերջնականապես թողնում և ծննդավայրը և փոխադրվում Յերևան, փորտեղ ապրում և նախ իրրև պաշտոնյա, սպա իրրև վստտակալոր թոշակառու:

Նրա «ժառանգութեան ցուցակը» ճոխացած ևր արդեն յերևանամյա մանկավարժական, ավելի քան քառասնամյա հասարակական ու մանավանդ հիսնամյա դրական դործունեյութեան անցյալով:

Այստեղ, հանրապետութեան մայրաքաղաքում, բանաստեղծը վաթսուներկու տարին լրացրած հասակում վախճանվում և 1929 թվականի սեպտեմբերի 29-ին, յերեկոյան ժամը 5-ի մոտերքը՝ հանկարծամահ լինելով: Հուղարկավորութիւնը լինում և հոկտեմբերի 2-ին. թաղվում և Յերևան քաղաքի «Մլերի» կոչված դերեղմանոցում:

III

Հովհաննիսյանը դրական դործունեյութիւնը «յուր համար» սկսել և աշակերտական նստարանից, Լազարյան ճեմարանում: Այստեղ այն ժամանակ դասատու ևր բանաստեղծ Սմբատ Շահաղիդյանը, վորը հենց սկզբից մեծապես ազդել և յուր սանի վրա:

Հովհաննիսյանի դպրոցական տետրակները, վորոնք պահվում են Յերևանի պետական թանգարանում,

ցույց են տալիս, վոր նա վոսանալորներ սկսել և գրել գեուես 1879 թվականին, յերբ 15 տարեկան եր, 4-րդ դասարանում :

Թվագրված վոսանալորների շարքում ամենալազ գրվածը Փրանսացի բանաստեղծ Արնոյի «Տերեւի» բանաստեղծության թարգմանությունն է, վորի տակ նըշված է «1879, ապրիլ»*) : Նույն տարում սրան հետևում են ուրիշ, ինքնուրույն ու թարգմանական վոսանալորներ, վորոնցից մինչև հիմա վոչ մեկը չի հրատարակված :

Պատանի բանաստեղծի գրականապես «բոյ քաշելն» ապշելի յե առաջին տարիներում : 1879 թվականին նրա գրածները կատարելապես աշակերտական փորձեր են. մեկ տարվա ընթացքում նա աճապես և հասունանում, վոր 1880 թվականին 16 տարեկան պատանու գրչի տակից յեղնում է «Տեսել ևս արդյոք այն բլուրները» բանաստեղծությունը, վոր արդեն վարպետի գործ է արվեստի տեսակետից :

Բանաստեղծն առաջին անգամ գրական հրատարակ է յեղնում 1883 թվականին**), յերբ Տիգրան Նազարյանի «Աղբյուր» մանկական ամսագրում նույն թվականի ապրիլի համարի մեջ տպագրված լույս և տեսնում նրա մի ինքնուրույն վոսանալորը («Ձինջ յերկնքից վոսկի

*) Արնոյի այս վոսանալորը մեր գրականության մեջ հայտնի յե Ռաֆայել Պատկանյանի թարգմանությամբ ու «Վոստիկ» վերնագրով :

**) Գրականության մեջ տարածված է մի տեղեկություն, թե բանաստեղծը գրական հրատարակ է յեղել 1882 թվականին, յերբ իրբ լույս և տեսել Գյոթեյի «Ջինորսի» նրա թարգմանությունն Եջմիածնի «Արարատում» : Բայց այս տեղեկությունը, վորի հիման վրա յեղ հենց հաշվում էյին, թե բանաստեղծի գրական գործունեյության 30-ամյակը լրացել եր 1912 թվականին, սխալ է : Մեր ստուգումը պարզեց, վոր «Ջինորս» սովված է «Արարատում» վոչ թե 1882 թվականին, այլ այս հանգետի 1884 թվականի մարտի 31-ի գրքում :

արև, Տայիս և մեզ սիրո բնարև» և այլն^{*)}։ Այս միջոցին բանաստեղծն ուղիղ 19 տարեկան եր։

Լազարյան ճեմարանի բարձր դասարաններում Հովհաննեսիսյանն աշխատակցում եր դպրոցական «Հուլյս» թերթին՝ միաժամանակ անդուլ տքնելով յուր գրարվեստը կատարելագործելու վրա։ Այս շրջանի գործերից գրական արժեք ունեն հատկապես նրա թարգմանությունները։

Մական Հովհաննեսիսյանի պոետական մեղրամիտր կազմում և նրա կյանքի այն շրջանը, յերբ նա համարասարանի ուսանող և 1884 թվականի գարնանից մինչև 1888 թվականի ամառը, յերբ նա այնպես էր համարասարանը, հորդ ու անընդհատ խմում և նրա բանաստեղծությունների վճիտ շատրվանը՝ մատուղահաս տաղանդի արևի տակ շողշողալով ծիածանի բոլոր գույներով։ Զափաղանցություն էի լինիլ, յեթե առնեք, վոր բանաստեղծն այս շրջանումն և գրել յուր մինչև հիմա տպագրված բոլոր վասննավսրների գրեթե 50 տոկոսը, վոր յեթե գնեք գեղարվեստական գնահատության կշռի մեկ թաթր, թերևս կարող և քաշել, բարձրացնել մնացածը պարունակող մյուս թաթր։

Այս միջոցին բանաստեղծը մասնակցում եր Մոսկվայի հայ ուսանողների գրական ընկերության գործունեյությանը։ Ուսանողական այս խումբը կազմակերպում եր հավաքութենք, վորտեղ գեկուցումներ եյին կարդացվում հայ ուսանողների ու ինտելիգենցիայի համար, մասնակցում եր հասարակական գործերին և մասնակի հրատարակություններ եր անում։ Խմբի՝ բանաստեղծից ծածուկ հավաքած միջոցներով և ահա, վոր 1887 թվականին իրրև հիշյալ սերիայի № 5 հրատարակություն լույս և տեսնում Հովհաննեսիսյանի «Բանաստեղծությունների» անդրանիկ գրքույկը, Մոսկվայում։

Գրքույկը թողնում և մեծ տպավորություն։ Արևե-

^{*)} Հմմտ. նաև «Աղբյուր», 1913 թ. ապրիլ։

լահայ, նույնիսկ արևմտահայ մամուլը վկայում է, վոր վոտանավորների այս փոքրիկ տետրով հայ դրահանու-
թյան ասպարեզը վոտք է և զնում մի անվիճելի տա-
ղանդ, վոր փայլուն ապագա յե խոստանում: Հասարա-
կությունն, ել յուր կողմից և ջերմ ընդունելություն
ցույց տալիս: Յեւ այս թվականից Հովհաննիսյանի
համար միանգամ ընդմիջտ ապահովվում է քնարերգակ
սոստի ու վոճարան հեղինակի անունը:

Հովհաննիսյանը շարունակում է յուր դրահան
գործունեյությունը՝ բանաստեղծություններ տպագրե-
լով զանազան հրատարակությունների մեջ:

Շուտով նրա բանաստեղծություններից «Ժայռը»,
«Ավերակը», «Գյուղի ժամը», «Հատիկը», «Արտավաղ-
դը», «Սյունյաց իշխանը», «Աշուղը» և այլն, թարգմա-
նություններից «Յոլուն աստղերը», «Գերի արագիլը»,
«Անդրագետը», «Յերգչի անձքն» ու մյուսները մտնում
են դասագրքերի մեջ, հեղեղում ուսումնարանները և
կամ արտասանվում հանդեսներում, իսկ տաղերը, «Ախ,
տոյեք ինձ քաղցր մի քուն», «Ալադյադ բարձր սարին»,
«Արագն յեկալ լափին տալով», «Լուռ կաց, սիրտ իմ»,
«Նոր դարուն» յեղանակվում և յերգվում են՝ լայնորեն
տարածվելով ժողովրդական մասսաների մեջ եւ*):
Այսպիսով Հովհաննիսյանը բառացի իմաստով դառնում
է դասական հեղինակ ու ժողովրդական բանաստեղծ:

*) Սրանցից «Արագն եկալ»-ն այնքան և ժողովրդականա-
նում և մերվում մեր անդիր բանահյուսության հետ, վոր հե-
տագայում լրագրության մեջ մինչև անդամ մի կուրջագային
վեճ և ծագում այն մասին, թե ո՞վ է յերգի հեղինակը—սոստի
ժողովուրդը, թե ժողովրդական սոստը: Տեսեք Գ. Մակին-
ցյանի «Գրական մանրունքներ» («Մշակ» լրագիր, Թիֆլիս,
1914, ապրիլի 23, № 87), Գ. Լեվոնյանի «Գրական ասուլիս-
ներ» («Մշակ» 1914, ապրիլի 29, № 92) ու իրեն՝ բանաստեղծի
հոգվածը — Հ. Հովհաննիսյան «Մի լուսարանության շուրջը»
(«Մշակ», 1914, մայիսի 10, № 100):

Ուսուցչական գործունեությունների յերեսնամյա շրջանը միտոսեսակ չի ազդել Հովհաննիսյանի բեղմնավորություն վրա: Յեթե ընդունենք, վոր այս ամբողջ շրջանում նա արտադրել և այնքան, վորքան գրել եր ուսանողություն 5 տարում, ապա համեմատելով կտեսնենք, վոր վարժապետություն արաջին տասնամյակում նա ստեղծագործում և նախկինի կիսի չափ, իսկ մնացած յերկու տասնամյակից ամեն մեկում ուսանողական շրջանի հազիվ քառորդի չափ:

1908 թվականին, արաջին դրբույլի տղազրությունից մոտ 20 տարի անց, Բագվի Հայոց կուլտուրական Միություն միջոցներով յույս և տեսնում նրա «Բանաստեղծությունները» նոր ու ճոխացրած հրատարակությունը: Այս թվականից մամուլի մեջ սկսվում և աստիճանաբար գործկացող կամսանիա Հովհաննիսյանի սգտին: Չանազան կողմերից ձայներ են յավում նրա հորեյանը տոնելու մասին: 1912 թվականին Վաղարշապատի հորեյանական հանձնաժողովը մի փոքրիկ դրբույլով յույս և ընծայում նրա «Բանաստեղծությունները» ժողովրդական հրատարակությունը: Նույն թվականից տարբեր վայրերում սկսում են կատարել բանաստեղծի պատվին հորեյանական հանդեսներ: Վերջապես 1913 թվականին մայիսի 10-ին (հին տոմարով ապրիլի 27-ին) Բագվում, բանաստեղծի պաշտոնավայրում, հայ ու հարևան ազգությունների ներկայացուցիչները մասնակցությունը հանդիսավորապես տոնվում և նրա գրական գործունեության յերեսնամյա հորեյանը: Արևելահայ գրեթե ամբողջ մամուլը*), այլ և ուսու-

*) Ասում ենք «գրեթե», վորովհետև, ինչպես հիմա յե պարզվում, ամենատարածված կովկասահայ լրագիրը—Թիֆլիսի «Հորիզոնը», վոր այնպիսի շուք ու շահեղով տոնել եր այն ժամանակ իրեն ու յուր թայֆային վիղ ճկած յերկու հայ հեղինակի հորեյանները, դավադրաբար բոյկոտել եր հորեյանը Հովհաննիսյանի, վորը նրանց քաղաքական հակառակորդն եր

բեն մամուլի որդաններ կովկասում ու Մոսկվայում արձազանդում են հորելյանին՝ հավաստելով բանաստեղծի դերն ու գործի արժանիքները:

Գրահանութեան ու մամուլի մեջ Հովհաննիսյանի պոեզիայի նկատմամբ յեղած ուշադրութեանն ու հարցասիրութեանն ավելանում էլին հետզհետե, յերբ պայթեց համաշխարհային պատերազմը յուր ահռելի հեռանքներով, վորոնց ժամանակ մոռացվեցին կուլտուրական ու գրական շահադրժութեաններն առհասարակ:

Համաշխարհային պատերազմից հետո, յուր գրական գործունեութեան 5-րդ, վերջին, տասնամյակում Հովհաննիսյանը շատ քիչ բան է արտադրել: Այս տասնամյակը գրական արգասավորութեան կողմից չի կարող համեմատվել մինչև անդամ նրա ստեղծագործութեան առաջին հնգամյակի հետ (1880—1884):

Համարվում: Թիֆլիսի հայ դրորդներից մեկն այս մասին մեր արած հարցումին պատասխանելով գրում է մեզ 1930 թվականի հունիսի 29-ի նամակով:

«Հովհաննիս Հովհաննիսյանի մասին յես գրել էլի մի բավական ընդարձակ հոդված, վորը պիտի տպվեր «Հորիզոնում»: Հոդվածը շարվեց, սրբագրութեան թերթը յես ստացա և սրբագրելով ուղում էլի տպարան ուղարկել, հանկարծ կարգադրվեց գառայթ հոդվածը շտպադրել, մինչև խմբագրական կոլեգիայի նիստը»: Հոդվածը 2—3 շաբաթ այդպես մնաց, և ապա վորոշումն ինձ հայտնեցին — «Հովհաննիսյանի հորելյանին շարձազանդել»: Հեռանքն այն յեղավ, վոր հոդվածը կորավ, ձեռագիրն էլ մնաց տպարանում: Այս խնդրում դժբախտաբար մեծ դեր խաղաց մեր հայանի գրողներից մեկը»:

Յեվ այսպես, история правду видит, да не скоро скажет... Ախտո՛ս, նամակագիրը խորհրդավոր կերպով լուծում է այն մասին, թե ով էր մեր հայանի գրողներից այն մեկը, վոր այն ժամանակ Դեյ Մրուսի դեր էր կատարում «Հորիզոնի» պահնորդական բաժանմունքում...

Պսևար չունեցալ յուր յեթև վոչ բոլոր յերկերի կամ բայր ասպաղբոված գործերի, գոնև լույս տեսած բոլոր բանաստեղծութիւնների լիակատար ժողովածուն տեսնելու խնդութիւնը: Մինչև հիմա չի կազմված նրա ասպաղբ յերկերի բիրրիպարաֆիան: Չի գրված նրա կենսագրութիւնն ել:

Թեև գեո մանրամասն հայանի չի նրա միջավայրի, կենցաղի, մտքի ու սրտի պատմութիւնը, բայց և այնպէս մեզ անվիճելի յե թվում, վոր բանաստեղծի վերջին տասնամյակների անհատական յերգերի մեծ մասի տիրութիւնն արտահայտութիւն և նաև այն հանգամանքի, վոր նա գիտակցում եր, թե յուր պոեզիայի վայրահալ ընթացքի պատճառը յուր կյանքի անհրապույր, գորչ ու դաժան պայմաններն են:

Հնազարի մեծ գիտնականներից մեկը— Արխիմեդեսն ասում եր. «Տվեք ինձ մի հենակետ ու մի լծակ, և յես կրարձրացնեմ յերկրագունդը»: Հենակետը մարդիս ընդունակութիւնն և, լծակը՝ պայմանները: Պայմանները բախտավորների համար լծակ են, անբախտների համար՝ լուծ: Անհատների կյանքում պատահում և այնպէս ել, վոր պայմանները յերբեմն լծակ են լինում, յերբեմն ել լուծ:

Հովհաննիսյանի համար կյանքի պայմանները հետամնաց նահապետական ավանից մինչև միջազգային խոշոր կենտրոններից մեկը—Վաղարշապատից մինչև Մոսկվա—լծակ եյին, իսկ մայրաքաղաքի լայնաշունչ համալսարանից ու բանաստեղծի պայծառ աշխատանքից մինչև մայրավանքի անող սինողն ու չինովնիկի նսեմ պաշտոնախուցը՝ լուծ:

Հենակետը կար, լծակն եր լծանում, ծանրանում...

Որեցոր հալվում մեղրամոմի պէս,
Հատնում են ույժերս, և խինդ, և ավյուն,
Մանուկ իղձերիս կարոտում եմ յես,
Ել բացվելու չե ինձ համար գարուն:

Յեւ վ սիրտս, վոր մի տավիղ եր անուշ,
Հնչում եր, վորպես կարկաչուն աղբյուր,
Ախ, այսոր բեկբեկ՝ լարերը քնքուշ,
Մահու դրոշմով լուել ե տխուր...

IV

Շատերի կողմից նշված ե, վոր Հովհաննիսյանի պոեզիայի հիմնական տոնը, հնչյունը թախծային ե. նա մեր գրականութեան մեջ առաջնակարգ թախծերդակ ե ճանաչված: Սակայն նրա պոեզիայի սոցիոլոգիական ուսումնասիրութեան միջոցին բավական չի շեշտել նրա բանաստեղծութեան միևնորային հնչումը, այլ անհրաժեշտ ե սլարդել նրա թախծերդի արմատները, վորոնք դերազանցապես հասարակական են՝ նեղ անհատական կյանքի պայմաններով բարդացած:

Վո՞րն ե այն կոլլեկտիվը, վորի սպրուհներին արձագանդ ե տալիս բանաստեղծի թախծոտ քնարը:

Մեր մատնանշումը, թե Հովհաննիսյանը գաղափարապես պատկանում ե հասարակական այն հոսանքին, վորի ակունքը հասնում ե մինչև Մովսես Բաղրամյանի «Հորդորակը», արդեն տալիս ե այս հարցման պատասխանը:

Ինքը բանաստեղծը շատ անգամ ե արտահայտել յուր փոտանավորներում, թե նրա հասարակական շահագրգռութեան առարկան ամենից տուաջ ազգութեանն ե, հայրենիքը: Այսպես, դրական հենց առաջին քայլերի ժամանակ պոետը հայտարարում ե.

Յեւ մնաք բարով, սե՛ր, համբո՛ւյր կուսի,
Յեւ մանուկ հրճվա՛նք մատաղ որերի,
Յեւ հայրենյացս եմ միայն սիրահար,
Նա ե լոկ վշտի աղբյուր ինձ համար:

Նույնը կրկնում ե հաստատում ե բանաստեղծը տասնյակ տարիներ անց. յուր կյանքի վերջին շրջանում նա դիմելով հայրենիքին՝ ասում ե՝

Յերագներիս մշտական
Տիրուհին ես պաշտելի,
Իմ այցելու գիշերվան
Վշտի անհուն ժամերի:

Մի ուրիշ բանաստեղծության մեջ նա ներկայացնում է յուր հողեհարազատներին, վորոնք այնպես համապատասխան են իրար—մուսային, վոր փշյա պսակով և դարդարուն, ու հայրենիքը, վոր պիրկ շղթայակապ է.

Յեւ հիմա մուսաս այսպիսի գիշեր
Յերևում է ինձ փուշ պսակ գլխին,
Յեւ յերգում յեմ յես քո կուռ շղթաներ,
Սարուկ հայրենիք, իմ մայր տխրագին:

Սոցիալական համակրությունների նույն բեռնի և դեպ ինքը քաշում բանաստեղծի հողին, յերբ նա ներկայի ծանր կացությունից հետո ուզում է յերգել յուր հասարակական-քնդաքական ակնկալությունն ու յերգանքն . ել.

Յեւ հիմա միայն՝ անուշ, սիրելի
Մի յերազ ունեմ, յերկիր պաշտելի,
Վոր մեկ էլ քնարս ձեռքս առնելի
Քս հարությունը տոնելու համար:

Պոետի դրոշն ակներև է, վորոչ: Նա պատկանում է այն բանակին, վորին զինվորագրվել է յին նրա անմիջական նախորդներն Ալիշանից մինչև Գամառ-Քաթիպա ու Պեշիկթաշլյանից մինչև Սմբատ Եահազիդյան:

Սակայն հասարակական-դասակարգային ի՞նչ նոր մտայնության ու տրամադրությունների արտահայտություն են պոետի յերգերը, ինչո՞վ է բանաստեղծ տարբերվում յուր նախորդներից, կամ վորո՞նք են այն նոր հասկանիչները, վորոնցով ոժտված է նրա պոեզիան:

Հովհաննիսյանի հասարակական-քաղաքական պոեզիան, վոր ձևավորվել է գլխավորապես անցյալ դարի վերջին տասնամյակներում, հայ հանրային բուրժուական, ազգայնական խավերի արամազբույթյան վայրեջջի արձագանքն է:

Այս վայրեջջի սկզբնակետը 1878 թվականին Պրուսիայի մայրաքաղաքում դումարված միջազգային կոնգրեսն է Տաճկահայաստանին վերաբերող ունայն ԵԱ-րդ հողվածով: Բեռլինի հաշտությունը հայոց հարցի հուսախարոզ ՊՐԵՅ ԼԵՍԵ-ը դարձավ կատարելապես: Նույնիսկ ծայրահեղ լավատեսներն ստիպված էլին խոստովանելու, թե տխրություն ու վհասություն եր նշմարվում «ազգի վրա», և թե ժողովուրդը հուսահատված էր*): Բայց թե իրոք ինչպիսի լքում էր առաջ բերել յեվրոպական դիպլոմատիայի անտեսող արարքը հայկական անըջասեր շրջաններում, վորոնք այնքան սին հույսեր էլին դրել «քրիստոնյա» պետությունների «մարդասեր» քաղաքականության վրա Տաճկահայաստանին ինքնավարություն կամ սեփորմներ տալու հարցում, — ամենից պարզ ցույց են տալիս հետևյալ տույերը, վորոնց մեջ մի նշանավոր հայ հեղինակ պատկերացնում է յուր հողեփիծակը Բեռլինի կոնգրեսից հետո:

«Շատ տխուր էլի այն որը... Արչավանքը Տաճկաստանի վրա թեև մեմամեծ ու ազնիվ խոստմունքներով էր սկսված, բայց փայ-բաժինը շատ անարդարությամբ էր կատարվում... Վոչ մի ավագակախումբ այնպիսի լքրությամբ իրա մեջ բաժանած չէր կուպուտ կողոպուտը, վորքան վոր այս նորատեսակ խաչակիրների վոհմակը բաժանում էր որ ցիբեկով, փող ու թրմբուկների ձայնով յուր կատարած հափշտակությունը: Իսկ տաճկահայերս, թշվառ հայերս, այդ միջոցին

*) Հմմտ. Մինաս Չերազ «Ինչ շահեցանք ՊԷՂԻՆԻ վեհաժողովին», Կոստանդնուպոլիս, 1878, էջ 7 ու 24:

դոնե գուռ ընկած, այդ ավազակապետների ծառաների առջև ծուներ դրած՝ մեր պապերու թողած ժառանգութեան ամենափոքրիկ մասն եյինք խնդրում և մեզ չեյին տալիս: Վոչ միայն չեյին տալիս, այլև ծիծաղում եյին մեր պարզամտութեան վրա... Ախ, շատ տխուր եյի այն սրբ... Ամենին, ամենին անիծում եյի այդ տխուր սրբ, մինչև անգամ ծնած որս անիծում եյի:»*)

Եւս այսպէս գրում եր—գլխով՝ ք ուլ—Ռաիայել Պատկանյանը. նա, վոր գրածի շրջանի բանաստեղծն եր, հրահրող ռազմերգակը հայ պոեզիայում: Տեսնելով նաև ներքին ուժերի բացակայութեանն ազգային ինքորինութեան ստեղծելու գործում՝ նույնիսկ նա ընկծվել եր և սգում եր 1878 թվականին.

Վհատիչ մտքեր... բայց յես ի՞նչ անեմ,
Չունիմ յես վոսկի, վոր յեղբարցս տամ,
Ուժժ ել չունեմ յես նոցա պաշտպանեմ...
Եհ, կերթամ հետերն գեթ տրամիմ ուլամ:

Ահա «տրամելու և լալու» այս տրամադրութեանների, նահանջի ապրումների արտահայտիչը յեղավ Հովհաննիսյանի պոեզիան, վոր բողբոջել եր սկսում 80-ական թվականների վհատ մթնոլորտում:

Մրան անշուշտ մեծապէս նպաստում եր նաև այն հանգամանքը, վոր նույն տարիները նահանջի ու վհատութեան ժամանակաշրջան եյին ռուսական հանրային կյանքում ել, մի կյանք, վորի ալիքներն ազդում, և տրամադրութեանները համակում եյին նաև հայ առուջավոր ինտելիգենցիային: Ռուսիայում Ռիսակովի ուսմբի վորոտից հետո հասարակական կյանքում թաղավորում եր մեռելային լուծյունը համատարած: Գրականութեան մեջ միալար սգում եր պոեզիան Նազ-

*) Սյուրուկի (Ռ. Պատկանյանի) «Մեր տեղի ծակարունները»: Տեսեք «Հացի կտոր դեյթունցուն» ժողովածու Գր. Չալիուչյանի խմբագրութեամբ, Նոր Նախիջևան, 1909, էջ 12—15:

սոնի, վոր հայրենի իրականութիւնը բնորոշում եր իբրև «անթափանց գիշեր, վորը խալար ե ինչպես դերեզման»:

Հաջորդող 90-ական թվականների հասարակական քաղաքական անցքերը չբարձրացրին Հովհաննիսյանի տրամադրութիւնը: Մի կողմից՝ ցարական ռեժիմի խստացումն ու դատանութիւններն ամբողջ պետութեան մեջ ու մասնավորապես Կովկասում, մյուս կողմից՝ սուլթանական վարչակարգի խժգժութիւններն ու հայկական ահուկի կոտորածներն սոսմանյան կայսրութեան մեջ և հատկապես տաճկահայ վիլայեթներում՝ սոսկալի ազդեցին Հովհաննիսյանի քնարի վրա:

«Սգո որերը» ծնեցին սգո յերգեր, և պոետը վերջնականապես կաղապարվեց իբրև թախծերգահ:

Գամառ Քաթիպայի պոեզիայի հակառակ, վորը սրա գոված բազեյի նման ճախրում եր վորսատենչ և ուղմի կարոտով ծղրտում.—

• Յե՞րբ ապա սասա, յե՞րբ սրի շաչյուն,
Փողի ձայներ, մարտի դոչյուն,—

Հովհաննիսյանի պոեզիան յուր յերգած արտուտի պես թփրտում ե վիրավոր և հեծեծում սևսրտամ:

Յես սեր կյերգեյի, բայց և աղնիվ մարտ,
Այլ, ա՛խ, ցրտերից խամբեցալ դարուն,
Թոչնեցալ սրտիս անուշ կոկոն վարդ,
Կապված և լուռ՝ վտակ կարկաչուն:

VI.

Պատկանյանի վոտանավորներից Հովհաննիսյանի բանաստեղծութիւնները դանազանվում են վոչ միայն վայրէջքի տրամադրութեամբ ու թախծայի տոնով, այլ և մի կարեոր կետում ել: Այս կետը պոետի վերաբերմունքն և դեպի ոտար ժողովուրդները, դեպի հարևան ազգութիւնները:

Հայ սրեղիայի սրտամության մեջ ամենաթթու օտարասեպության ներկայացուցիչը Պատկանյանն է: Յեթե վերցնենք սրա միմիայն դրական լեզվով հորինած բանաստեղծությունները, հարևան ժողովուրդներին ալտիսի վորակումների կհանդիպենք:

Թուրքը հոտած է, մոլի, անկրոն, մոլեկան, անսիրտ,
հույնը՝ դարևոր վոսոխ, կրոնամոլ, խարդախ,
յեզդին՝ տավարի գող,
ոսմանլին կամ տաճիկը՝ կատղած, չար, տափոտ,
անգութ,

չերքեզը՝ հեն, ալսինքն ավազակ,
պարսիկը՝ հոտած, անկրոն, մոլեկան, վոխերիմ,
գու, տափոտ,

ռուսը՝ նենգ, դալթակղիչ, բռնակալ,
բուրդն՝ անգութ, անկշտում, չար,
վրացին՝ գիթ, սարկոբեն շղթա կրող, գինեճան և
ոտարն ընդհանրապես, վոր Հայաստումն է ապրում,
ճպտոտ, պլչած աչերով, առելի:

Քամառ-Քաթիպան քիչ անգամ է զանազանում բրոնացող ազգի բռնակալին—սուլթանին, փաշային և այլն: Նրա անգուստ դայրուլթն ուղղված է ազգերի դեմ: Նմուշի համար հիշենք նրա չովինիզմը ցուցադրող հայանի քառյակը, վորտեղ սպառնում է հարևան ազգերի բոլոր վորդիններին անխաիր.

Նենգ ռուս, թուրք մոլի, պարսիկ վոխերիմ,
Դարևոր վոսոխ գու հույն կրոնամոլ,
Գիտցեք, վոր իմ սուր յերկսայրի սրից
Անվնաս չեր մնալ վոչ մի ձեր վորդին*):

*) Սմբատ Ծահաղիզը, վոր ընդհանուր առմամբ զերծ է Պատկանյանի չովինիզմից, նույնպես ունի հատվածներ, վորտեղից արտափայլում է նրա իղճուկ հայացքը հարևան մեքանի ժողովուրդների մասին: Հմմտ. կովկասյան լեռնականների վերաբերմամբ «Լեռնի վիշտը» Մոսկվա, 1865, էջ 68, վրացիների վերաբերմամբ՝ նույնտեղ, էջ 80 ու մահմեդական ժողովուրդների վերաբերմամբ՝ նույն տեղ, էջ 114:

Հովհաննիսյանի բոնաստեղծությունները միանգամայն ուրիշ վորակ ունեն այս կողմից:

Նրա վոտանալորներում ոտար ժողովրդի անուն չկա բոլորովին: Նրա յերգերը միանգամայն դերժ են նախորդ բանաստեղծների շովինիզմից: Սոսքն ուղղերով Արագածին՝ պոեան իրավամբ ասում և յուր մասին.

Քո արեղարդ կատարին
Աչքս ուղղած թախծալից՝
Ել չի տեսնում ոտարին
Հոգուս աչքը թախծալից:

Հովհաննիսյանի նացիոնալիզմն անշուշտ չի նույնանում, բայց մի՛ քիչ մոտենում և Միքայել Նալբանդյանի նացիոնալիզմին, վորը հայոց դատը պաշտպանելով՝ չեր տողորվում ոտարակերությամբ, այլ ուղղվելով նվաճողների պետական ռեժիմի բռնակալության դեմ՝ պահանջում եր «խոստովանել մյուս ուրիշ ազգությունքը անխտիր նույնպիսի իրավանց ժառանգ, վորպիսին ստացել և ինքը»*):

Վայերիյ Իբրուսովը « Поэзия Армении » ժողովածույի ներածականում ճիշտ և նկատում, թե «Պատկանյանի պոեզիայի նշանակությունը լիովին գնահատելը դժվար բան և այն ընթերցողի համար, վոր հայ չի»: Այս ճիշտ, բայց մեղմ և ասված: Այո, Պատկանյանի մի շարք վոտանալորներն անհասկանալի յեն մի հեռավոր ոտարի համար, նրանք վոչ մի հույզ առաջ չեն բերի մի արարի, մի հնդիկի կամ մի չինացու մեջ, բայց այս դեռ ամբողջ շարիքը չի: Գամառ Քաթիպայի

*) Թե վորքան արմատական հայացքներ ուներ Մ. Նալբանդյանն ազգության ու ազգային հարցի մասին ընդհանրապես, այս կարելի չե տեսնել մեր «Միքայել Նալբանդյան» աշխատության մեջ, Յե. Կան, 1928, էջ 47—57:

վրտանալորենքի մեջ կան այնպիսիները, վորոնք, ճիշտ
հենց այն քառյակի նման, վոր սպառնում և ջնջել ու-
սի, թուրքի, հույնի ու պարսկի բոլոր վորդիներին
անխտիր, միմիայն զայրույթ ու ատելություն կարող
են առաջ բերել, յեթե թարգմանվելով մատչելի դա-
նան հարեան ազգերի ընթերցողներին:

Ուրիշ և Հովհաննիսյանի քնարը՝ մատամբ հենց
հանրային տրամադրությունների իջնող ընթացքի
չնորհիվ:

Վերելքն ու հարձակումը սաստկացնում են թշնա-
մական վողին ու զայրույթը հակառակ բանակի դեմ.
վայրենջքն ու նահանջը հոգեբանորեն ազդում են նոր
ուղղությամբ սկսվում և մեղմանալ վոռոխների նկատ-
մամբ վոխը, և սաստկանում և յուրայինների ձաղկու-
մբ: Նահանջողը հանգուրժամիտ և դատնում և ինքնա-
դատ:

Հովհաննիսյանի բանաստեղծությունների մեջ
բունությունը, հալածանքը, չարիքն անդեմ են ազդա-
յին յերանդի կողմից, մի տեսակ՝ պատմական տա-
րերք. մինչև անդամ համաշխարհային պատերազմի
արհավիրքներին նվիրած մի բանաստեղծության մեջ նա
կոնկրետ ազդային-հասարակական բանակներ չի տես-
նում, այլ նկատում և մի կույր ույթ—բախտը դարբին:
Այսպիսի ըմբռնման մեջ հեռավոր կերպով նշմարվում
և պատմական դետերմինիզմի ազդու պաղափարը: Վոր-
քան ել պատմադիտական կոնկրետացման տեսակետից
այսպիսի ըմբռնումն անբավարար լինի, բանաստեղծու-
թյունների ընդհանրական դառնայու կողմից այս ան-
դեմ պատկերացումը նպաստավոր և անպայման:

Այս հատկության չնորհիվ Հովհաննիսյանի պոե-
զիան, վոր յերդում և յուր հայրենիքի վիշտն առանց
սյլատյաց շեշտերի, կարող և սիրելի լինել ամեն մի
ազգության ընթերցողի, վորի յերկիրը տնջում և ո-
տար նվաճողի կամ սեփական բռնակալի կրնկի տակ:
Նրա դրվածքները կարող են հուզել այնպես, ինչպես

հուզում են Եկվիլենկոյի, Ֆրուզի ու Նադսոնի լավագույն վրտանալորները: Այս տեսակետից նրա այն բանաստեղծությունները, վորոնց մեջ լսելի չե «յերկրի մրմունջը», կարող են ազատազրական յերգեր դառնալ այն բոլոր ժողովուրդների համար, վորոնք թեև բնկճված են և տառապում են իմպերիալիզմի լծի ներքո, բայց վրդեւորված են ազատազրության ու լավագույն ապագայի հույսով:

Թռչնեցան ծաղկունքն իմ անուշ յերկրի,
Սառույցը կապեց արյունոտ վտակ,
Եւ պիտի ծաղկի՞ կուրծքը սարերի,
Արդյոք կանսնե՞մ աղբյուրներն հստակ:

Յերանի մեկ եւ աչքս բանայի,
Յեվ դու, իմ շեն տուն, այժմ գերեզման,
Ավետարերիդ յես ընդունեյի,
Լսեյի որհներդ քո վերածնության:

VII

Հետաքրքրական է նաև վորոշել, թե՛ քաղաքական որիենտացիայի հարցն ինչպես և անդրադարձել Հովհաննիսյանի բանաստեղծությունների մեջ:

Նահանջի տրամադրությունն աղգել և նրա վրա նաև այս ուլղությամբ:

Նրա հասարակական-քաղաքական պոեզիան այս կողմից եւ ամելի գզաստ ու իրատես և դարձել:

Ինչպես հայանի յե, արեւելահայ բանաստեղծության ու վիպագրության մեջ յեղել և յերկու գլխավոր որիենտացիա—ուսասիրական ու ուսատյաց (կամ յեւրոպասիրական):

Ռուսական որիենտացիայի ճանաչված ներկայացուցիչը Սաչատուր Աբովյանն և, վորը գրում եր «Վերք Հայաստանու» մեջ. «Որհնվի են սհաթը, վոր ոսի որհնած վրաը հայոց լիս աշխարհը մտալ և զղբաշի անիծած չար շունչը մեր յերկրիցը հալածեց: Քանի վոր մեր բերնումը շունչ կա, պետք և գիշեր ցերեկ մեր քաշած

որերը մտքներս բերենք, ուուսի յերեսը տեսնելիս յերեսներին խաչ հանենք, ասածուն փառք տանք, վոր մեր աղոթքը յսեց, մեզ ոուս թագավորի աստվածահաստատ ձեռի տակը բերեց»:

Արուվյանին հակառակ եր.մտածում Պատկանյանը: Նա հայ ժողովրդին սպառնացող վտանգը տեսնում է ցարական Ռուսիայի կողմից: «Մշակ» վոտանավորի մեջ նա ազդարարում է, թե «սելավ կուզա հյուսիսին»: «Արաքսի արտասուռնքի» մեջ Ռուսաստանը անվանվում է «ոտար փետա» ու «զայթակղիչ», վորը շղթայի յե դարկել կուվհասյան ժողովուրդներին: Մանոթ քառյակում նա կոտորվելու արժանի ոտարների շարքում հիշում է նաև նենդ ոուսին: «Փեսաներ» վոտանավորի մեջ յերկու անգամ ցարական Ռուսաստանը կոչված է «Նոր ինժաստան»:

Վերջապես հիշատակենք «Որորք Հայաստանի» վոտանավորը, վորտեղ նա դիմելով հայրենիքին՝ ասում է աշկարա.

Քեզ ոուսը*) թուր ձեռը բռնած
Մարդ չի թողնում քեզի մոտ.
Թե մոտ յեկան, դարձյալ չե փույթ,
Ունի շատ ուումը ու վառող:

Վոր աչքերդ չի խրատրդեն
Վառ շողերը արեդին,
Անթափանցիկ ու մեծ ասպար
Ունի բռնած իր ձեռքին:

Կամ թե անուշ քնիդ խափան
Չլինին նաև ջու վորդիք,

*) Տպված բնագրում սակասում է «ուուս» բառը: Մենք խմաստից հանելով յենթադրարար դրինք «ուուս»: Հետո ուրախությամբ տեղակացանք ընկեր Յերվանդ Շահազիզից, վոր Պատկանյանի յերդերի մի հին տետրակում հենց այսպես էլ նշանակված է:

Սպառազին տահապաններ
Նոցա վրա կան հերիք:

Ռուսաստայ Պատկանյանը յեմբրոպասեր եր: «Ազատ
յերգերի» հեղինակը յեմբրոպական դիմուղղման վրա
մեծ հույսեր եր դրել: Դեռ Բեռլինի 61-րդ հողմածից
հետո ել, յերբ մեղմացել եր սրա թողած հուսակործան
տպավորությունը՝ Գամառ Բաթիպան դարձյալ յերդ-
վում եր:

Ձե, չե, դահիճք չեն լուսավոր աղգեր,
Վստահ ենք, նոքա չեն մորթիլ հային,
Ձի հուսահատիինք, իմ յեղրայր հայեր,
Մեզ ել իրավունք կուտան մարդկային: *)

Հովհաննիսյանը միանգամայն ձեռնթափ ե թե՛ Ա-
րովյանի ու թե՛ Պատկանյանի որիննուացիաններից: Վոչ
«քրիստոնյա» Ռուսաստանից ողնություն, վոչ ել «լու-
սավոր» Յեմբրոպայից աղբնկալություն:

Բալ ինչ ապրեցանք անմիտ խոսքերով
Յեվ թեթեվամիտ սին յերազներով...

Տարիների շլորվելն ու թշվառության հարատե-
վումն անոգնականության նույն ճիչն ե խլում նրա ջնա-
րի լարերից:

Ո՛վ անբախտ յերկիր, և այս նոր տարին
Չբերեց պայծառ որվանդ ավետիք:
Կարոտ մնացիր դարնան արևին,
Մուխի պես ցնդեց յերազդ դողտրիկ:

*) Մեր հեղինակներից Ռաֆֆին յերիտասարդ հասակում
սաստիկ դեմ եր ուսական որիննուացիային (Հմմտ. «Մալբու»
ստաջարանը), իսկ Հովհաննես թումանյանը համալսարհային
պատերազմի ժամանակ՝ ջերմ կողմնակից (Հմմտ. նրա «Վեր-
ջին տաղնապը» վտտանավորը «Հորիզոն» լրագրում, Թիֆլիս,
1914, նոյեմբերի 9, № 250 ու «Վերջին որը» բանաստեղծու-
թյունը, «Հորիզոն» 1915, մայիսի 2, № 94:

Արտաքին ուղևության վրա հույս չդրած բանաստեղծին մտատանջության մեջ և ձգում ներքին ույթերի ակտր ու անպատրաստ յինելը:

Կռիվ և այս կյանքն, և այս կռվի մեջ
Վորքա՛ն անպատրաստ, տկար մեր ույթեր.
Բայց մենք գնում ենք մի հուսով անվերջ
Յեւ չունինք վսչինչ մենք այլ քաջալեր:

Բռնակալները գորեղ են, ներքին ույթերը՝ թույլ:
Այսպիսի պարագայում անհրաժեշտ եր ույթերի ծայրահեղ տնտեսում: Սրա հակառակ բանաստեղծը տեսնում և մի հախուսն ու ցավալի դործելակերպ,

Յերբ մենք միշտ պատրաստ մի ծանր կռվի՝
Վասնում ենք ույթեր դեռ չկազդուրված:

Գաղափարների այս կապակցությամբ նոր ու այժմեյական լուսաբանություն են ստանում «Սյունյաց իշխանի» հետևյալ տողերն ել, վորոնք մարդարեական են և կարծես գրված են համաշխարհային պատերազմի ազետարեր բաղխումների ու մեծ տարազրության ժամանակ.

Յեւ դո՛ւ, ուժասպա՛ռ, վիրավո՛ր յեղնիկ,
Ի՞նչպես կամեցար պարսիկ առյուծին
Կռիվ յելանել... Անրա՛խտ հայրենիք,
Արյունդ հոսում եր հեղեղի նման,—
Դու նոր վերքերով մի՞թե հարություն
Կամեցար առնել... Յերեսիդ վրան
Դեռ չեր ցամաքել արտասվաց առուն—
Մի ժպլիբ՝ ճակատ դու գոռ վտանգին
Տույց տվիր անահ: Յեւ ի՞նչ. փոխանակ
Որոր ասելու նիրհող գազանին,
Սոսկալի մարտի զարկեցիր կոչնակ...

Անշուշտ, բանաստեղծը շատ ավելի իրատես և, քան ի պաշտոնե քաղաքագետները: Սակայն հենց այս իրատեսությունը չքաջանում և ինքնապարծության միբաժ-

ներբ, և պարզվող տեսարանում նկարվում և անմխիթար
ու անմխիթարական կացութունն աշխարհակալ պե-
տութուններն մրցությամբ զո՛ւ դարձած փոքրիկ ժո-
ղովրդի:

Մահամերձ հիվանդ՝ անխա՛ռք ապրեցար,
Հարվում ևս կամաց դու մոմի նման,
Դու կալձեր տվիր, խարույկ չունեցար,
Գնում ևս դեպի անխաչ դերեզման:

Ձի յերգում ալլես, ալլ կոծում և բանասեղծը:
Միրելու սնարին ամքած՝ սրա սուգը սարսուռ և ազդում:
պարզ լավում և սեվակնած՝ սրածողի սառնաչունչ սոսա-
փյունը...

VIII

Հանրային յերկու հատվածի վիճակն ել—թե տած-
կահայերինն ու թե ռուսահայերինը—սե գույներով և
պատկերանում Հովհաննիսյանի աչքին:

Այնտեղ՝ սուլթանիզմի Սցիլլան, այստեղ՝ ցարիզ-
մի Պարիզան:

Սուլթանական թուրքիան պոետին ներկայանում և
անչեն անապատ ու ժողովրդական սպանդանոց, վորի
մասին նա ութսունական թվականներին պատմում և
լրարեր քամու բերանով:

Յես սլանում եմ շորցած դաշտերից,
Ուր հին ավերակ նոր ավերակին
Միշտ տեղ և տալիս. բոլոր կրճքերից
Լոք հառաչանք և թռչում դառնադին:

Ուր չկա անդուսպ կրքերին սահման,
Ուր որ ու գիշեր խիստ դատաւճախն
Սպասում են անթիվ զոհեր բռնության,
Ուր չկա ժպիտ մեկի յերեսին:

Այնտեղ թռչնում և վարդը կոկոնում
Չտեսած շողը վոսկի արևու...

Յեւ վ արդյոք յե՞րբ և այն թշվառ յերկրում
Փրկութեան դարուն նորից ծաղկելու...

90—ական թվականները վոչ միայն չարդարացրին
մի լավ սպառաշի նրա ակրնկալութունը, այլ ելավելի
հուսախարեցին. սկսվեցին տաճիհաւայերի սոսկալի
ջարդերը, վսրոնց ծանրութեան տակ բոլորովին կուչ
յեկամ րանաստեղծի հոգին.

Յեւ այսոր ահա արյան հեղեղից
Շառագունեցավ յերկինքը վճիւր,
Անդոր հառաչանք, ճիչեր վշտալից
Մեր յերեսներից խլեցին ժպիտ:

Աչք ենք դարձրնում ամենքս ակամա
Դեպի այն տխուր հովիտն արտասվաց,
Ուր հայ գութանի յերդն ամենորյա
Դարձել և ավեր վողբացող մի լաց:

Պոետը նորից հիշեց և յերգեց գարնան մասին, բայց
այս «նոր դարունը» նրա յերագած «փրկութեան դարու-
նը» չեր, այլ ավերի ու սրածութեան դարուն.

Սեւ-մութ սլատեց աշխարհին,
Սար ու ձոր դառան արին,
Մեղ վայ բերեց ևս տարին,
Ո՞ւր ևս դալիս, ա՛յ դարուն:

Դու յետ բերիք հավքերին,
Ո՞նց տեր ըլնեն բներին,
Սաղ տեղ չկա մեր յերկրին
Ձուր ևս դալիս, այ դարուն:

Պոետի հանրային շահագրգռութեան վլխալոր որ-
յեկան ելի «արտասվաց» հովիտն եր, Անդրմասիսը, ինչ-

այնս վոր յեղել եր Պատկանյանի ու Ռաֆֆու համար՝
Շահադիդի ու Պոռչյանի հակառակ, վորանց ուշադրու-
թյունն ասելի սեղեռությամ եր ուռածայ հասարակական
հարցերի վրա: Բայց և այնպես Հովհաննիսյանին մոտ-
հոգում եր նաև ուռածայերի կացությունը, Այսրմա-
սիսը:

Խաչատուր Արայյանի հիշատակին նվիրած վտա-
նավորի մեջ, վոր ցարական դրաքննությունն արդելել
եր հրատարակել, բանաստեղծը ուռածական ուժ իմ ր նկա-
րում ե իրրև մի դաժան ու հեղձուկ վտախկնական մի-
ջնավայր. յուր սպրած այն ժամանակաշրջանը նա անվա-
նում և «դառն որեր»,

Յերբ ասն ու կասկած

Իրբ յերկանաքար, հանդերձ կապարի,
Պատել և, խեղդել միտքն հասարակաց,
Յերբ կոպիտ ձեռքրն անյույս խավարի
Յել խարազանը անդուսպ բնության
Միայն բերում և հուսահատություն,
Մինչև յերկյուղով ստվերը սեփական
Ընդունել վրիժառու մարմնավորություն:

Ռուսահայ իրականության մեջ գլխավոր վտանգը
այլառերումն և. ստեղծվում և մի մթնոլորտ, վորտեղ
բուն թափով առաջ և գնում ազդային ու քաղաքա-
ցիական դիմադրիման պրոցեսը.

Այս դատարկ կյանքի անձխտ խնջույքում,
Ուր աննպատակ անցնում են որեր,
Ուր ամեն վառ կիրք, ամեն սուրբ գզացում
Խեղդում են չնչին առօրյա հոգսեր.

Ուր բաքոսական զեղխություններով
Մաշվում և, թոչնում ծագիկ հասակի,
Ուր ունայն փառքի սին յերազներով
Ձոհվում և բերկրանքն ազատ վիճակի.

Յերբ մտակի հորթին տաճարներ կանգնած
Մենք վաճառում ենք և՛ խիղճ, և՛ ամութ,
Յեւ նորա համար աստված մոռացած
Եւ արդարության չենք քաշում կարտա:

Յերբ մեր անդղա կրծքին կախ տալով
Մի ցնորակացն պատվի բոժոժներ
Միրել ևն տալիս մեզ նենդ զզվանքով
Անարգ սարուկի թունոտ շղթաներ:

Թեև բանաստեղծը պարզ չի շեշտում, բայց նրա
տված պատկերներից հեշտ և յեզրակացնել, վոր ու-
սական իրականության մեջ հայերին սպառնացող այս
այլասերումը կոչոր կենսարոններումն և կատարվում և
վոչ թե դյուղերում, վորտեղ կյանքն իհարկե զժվար և
անվանել «խնջույք» ու «բաքոսական զեղխություն-
ներ», և վորտեղ պնշուշտ չկան «կրծքի պատվի բոժոժ-
ներ» ու «մտակի հորթի տաճարներ»:

Այսպիսով յեթև տաճկահայերի հանդեպ ծառայած
ևր տնտեսական-կուլտուրական վայրենացումն ու Ֆի-
զիկական ընաճնջման որհար, ուսաստիճանին սպառնում
և ցարական «խարաղանը անդուսպ բռնության» կամ
«նենդ զզվանքը», վոր «սիրել և տալիս անարգ սարու-
կի թունոտ շղթաներ», այլև քաղաքների այլասերումն
ու ասպականությունը:

Ինորոչ և այն, վոր շնայած կովկասյան քաղաք-
ներում արդյունարերական կապիտալի մուտք գործե-
լուն ու գործարանային պրոլետարիատի հրապարակ
գալուն՝ Հովհաննիսյանի տպված բանաստեղծություն-
ներին մեջ չենք նշմարում վոչ միայն գործարան ու բան-
վոր բառերը, այլ և նույնիսկ քաղաք բառը: Քաղա-
քային կյանքի տեսարաններ, վոր այսպես թե այնպես
ելի կարելի յե գտնել Շահազիզի վոտանավորներում,
նույնպես չի տվել նա յուր տպված բանաստեղծու-
թյուններին մեջ:

Քաղաքի շերտալորումը, սրա դարգացման հետևեկարներն ու կարեւորութիւնը հասարակութիւնը վերակազմելու տեսակետից՝ հասկանալի չեղալ պնտակն վոչ յերիտասարդ ու վոչ ել ծերունի հասակում:

Սակայն այսպես չեյին նրա ժամանակակիցներին վրոմանք 80-ական թվականներին ուստահայ իրակոնութիւն մեջ: Սրանցից մեկը, անդրանիկը հայ մարքսիստներին, պատմում ե.

«1885 թվի ամառը Գանձակի դյուղերով մի պտույտ անելուց հետո, մնացի մոտ մեկ ու կես ամիս նյուդդար դյուղում... «Նիկոլի» աղբյուրի մոտ նստած՝ կարդում եյի սիրուհու նամակի պես Լաստալը...»

— Այդ ի՞նչ եք կարդում, — լսում եմ հանկարծ:

— Կարդում եմ Լաստալը, — պատասխանեցի յես:

— Լաստա՛լ, ինչպե՞ս գտաք, չե՞ք վոր արդեւլիած ե:

— Գիտեմ արդեւլիած ե, գտա ե կարդում եմ:

Լաստալի գրվածքի ընթերցանութիւնը ինձ վրացնող տպալորութիւն թողեց՝*):

Լաստալի ու Մարքսի ընթերցանութիւնից առաջացած այս ցնցումը, վոր շուտով ցնցելու եր ամբողջ հայ իրականութիւնն ու գրականութիւնը, դժբախտարար չի շոչափել Հովհաննիսյանին:

IX

Բանաստեղծի կարճ, խորիմաստ ու ցնցող այն խոսքը, թե

Գու կայծեր ավիր, խարույկ չունեցար, — վոր նա ուղղել ե հայրենիքին ե վորի մեջ ավել ե յուր յերկրի յերկհազարամյա պատմութիւն բնութագիրը, կարող ե գարմանք առաջ բերել այն ընթերցողի մեջ, վոր հայ հեղինակից սովորարար դովք ու հիաց-

*) Գեվորգ Ղարաջյան (Ս. Տ. Արկոմեդ) «Անցյալի հիշողութիւններից», Թիֆլիս, 1918, էջ 35—36:

մունք և լսել աղղային անցյալի մասին: Այս դարմանքի առթիվ պետք է հիշեցնենք յերկու հանգամանք. նախ, վոր Հովհաննիսյանի հիշյալ խոսքերը սլատահական չեն. նա նույն միտքն ավելի ընդարձակ դարզացրել և ուղիղ տեղ, և յերկրորդ այն, վոր բոլոր հայ հեղինակներն ել աղղային անցյալի նկատմամբ անխտիր միևնույն վերաբերմունքը չեն ունեցել միշտ:

Մրանցից շատերին հայ անցյալը յերևացել և իբրև մի յերանավետ ժամանակաշրջան, յերբ թերությունները, յեթե յեղել են, քաղաքական—վարչական չեն ու վոչ ել տնտեսական—սոցիալական: Նրանց նկատած գլխա վոր թերությունը բարոյական է. հին հայերն անմիաբան եյին, ատեցող, նախանձոտ:

Մակայն կա հայ գրողների մի փոքրաթիվ խումբ ել, վորին հայ անցյալն վոսկեղար չի թվացել. սրանք այնտեղ նկատել են վոչ միայն բարոյական սովերակողմեր, այլ և քաղաքական—վարչական ու տնտեսական—սոցիալական այնպիսի յերևույթներ, վորպիսին և հայրենի բռնակալությունը, հայ դասակարգերի հակամարտությունը, ժողովրդական մասսաների շահագործումն ու հարստահարումը հին Հայաստանում «փառապանծ» իշխողների կողմից:

Առավջին կարգի հեղինակները հիացած են, վոր անցյալում տեսնում են հայ հաղթական արքաներ, հայ քաջարի իշխաններ, հայ մեծազդեցիկ հոգևորականներ: Նրանց յերկերում աչքի յե ընկնում շքամոլ ու ծառայամիտ հայրենասիրությունը, վոր այս դեպքում հանդես և գալիս իբրև սլատամադրական արխատուկրատիզմ:

Յերկրորդ կարգի գրողները հիասթափված են հայ անցյալից, վորովհետև նախկին դարերում աննկատելի յեն կամ աննախանձելի վիճակ ունեն բուն ազգը, հասարակ ժողովուրդը, ստորին դասակարգերը: Մրանց գրվածքներում յերևում և սլարզասեր ու սլիբեյական

նացիոնայից՝ մի չհրապարակ և յեկնում մորպես պատմագրական դեմոկրատիզմ:

Հովհաննիսյանի տերմինով յեթև ասենք, առաջինները «խարույկի» թեորիան են բնդունում, իսկ յերկրորդները՝ «կայծերի»:

Ճիշտ և, ինքը Հովհաննիսյանը մի քանի մտտանագորքի մեջ յուր տուրքը տվել և «խարույկի» թեորիային՝ մերթ բնդ մերթ հիշելով «անցած փառքը», «դյուցազանց մողին», «փառամուր նախորդներին» և այլն, — բայց և այնպես չի կարելի ժխտել, մոր այս թուայիկ հիշատակումներն կողքին նա ունի բնդարձակ ու մեծարժեք եջեր ևլ, մորտեղ հանդես և գայիս նրա պատմագրական անուրանալի դրամական արձատական դեմոկրատիզմը:

Բանասակզը մի քանի պատմական նյութերի մասին և դրել: Սրանցից «Վահագնի ծնունդն» ու «Արատալապը» սիմֆոնիկ իմաստամուրում են ստացել, և միմիայն «Սունյաց իշխանն» և, մոր իրական պատմա-հոգևրանական մշակման և յենթարկվել: Այս պոեմայի մեջ ևլ հենց գանում ենք հայոց պատմական անցյալի մասին բանասանդծի վերարերմունքն ու արտահայտած խիստ դատավճիռ*):

Պոեան բնարել և մի դժվարին նյութ՝ բարաստանայով ավանդական հայացքների դեմ: Նրա հերոսը Ծրդ դարի քաղաքական գործիչներից մեկն և—Վասակ Սյունին, պարսկական դիմուղղման պարագայիս, մորին հաղարամյակների բնթացքում անարգել և սկայրել և հայ պատմագրությունը, և նգովել հոգևմորականությունը՝ գովասանքն ու գայինինները սալով նրա քաղաքական հակասակորդին, Վարդանին— կանո-

* «Սունյաց իշխանի» սկզբի Ծ քառյակը խիստ աղգամ և նագանի «Из тьмы времен» բանասանդումյան սկզբի Ծ քառյակից: Ծարունակությունը միանգամայն տարբեր և: Նագանի դրածի մեջ Հերոսարտան և հերոսը:

նահան սրբերի շարքն անցած Մամիկոնյանին, վոր բյուզանդական որևնտացիայի ղեկավարն եր *): Վաստակի մասին շատերն են գրել Հովհաննիսյանից առաջ: Սուենյաց իշխանին բանաստեղծութեան նյութ զարծրել է նաև Ալիշանը «Դասաստանք Վաստակա մասնչի» վերնագրով պոեմայի մեջ**), բայց Ալիշանն ել իբրև հոգեվորական, ու այն ել պատմադրական արխտակրատիզմի ներկայացուցիչ, չէր կարող անաչառ լինել Սյունյաց իշխանի նկատմամբ. նա ել և Վաստակին նկարում իբրև վառասեր, անձնամոլ, դավածան, վոր արժանի չէր գնդանի խալարին ու դժոխքի բոցերին:

Հովհաննիսյանը չի բնկծվում հաղարամյակներ լինթացքում ասիանդական դարձած վերաբերմունքից, անտես և տնում հին ազգասերներն տանլութունն ու յիկեղեցու սատոր և նոր ակնոցներով և նայում Վաստակի արտաքին ու հոգեկան աշխարհին: Սոսկական քրեական տխրի փոխարեն նա նրա մեջ տեսնում և հեռահայ հայրենասեր, իրատես քաղաքացեա, վորդեսեր ծնող, սայթաքած առաքինի ու տանջվող հանցադործ: Վաստակը պատկերանում և վոչ միայն իշխանի, վոչ միայն հայի, այլ և մարդ եյակի ապրումներով:

Վաստակի արողեղիայի այսպիսի բժրոնումը մի կատարյալ հերձված եր. առաջին անգամ եր, վոր պատմական մի խոշոր անցք ու սրա գործ իշները բանաստեղծորեն պատկերացվում եյին վոչ յեկեղեցու տեսակետից: Մինչև անգամ հայ պատմագիտութունը դեռ քննական ակնոցներով չէր մոռացել Ծրդ դարի կրոնական կոչված պատերազմին ու սրա հերոսներին: Հովհաննիսյանի

*) Մեջնադարի միակ հայ մատենադիրը, վոր դատաստանում եր յուր ժամանակվա հայերի բյուզանդական որևնտացիան բնդգրկած ապոստամբական շարժումները և ջատագովում հակաբյուզանդական հոտանքի քաղաքականութունը, Ծրդ դարի պատմագիր Ղևզոնդն է:

***) «Նվաղք», Գ. պրակ, Վենետիկ, 1867, էջ 129—143:

պոեմայի գրվելուց ու տպվելուց (1887 թ.) բավական
ժամանակ եր անցել, յերբ հրապարակ յեկավ պատմա-
գետ Գարագաշյանը Վասակին լիովին արդարացնող
յուր հայտնի կարծիքով*):

«Մյուռնյաց իշխանը», վոր մի սեղմ ու սիրուն դրա-
մատիկական պոեմա յե ազատամիտ հայացքներով, խոր
հոգեբանությամբ, ցայտուն հակադրություններով,
վառ պատկերներով, վոլորուն պարբերություններով ու
սլերճ լեզվով, վոչ միայն գեղարվեստական նորույթ
եր, այլ և իդեոլոգիական մի խիզախ մարտահրավեր
միջնադարյան մտածողությանն ու պատմահայացքին.

Բայց այդ անցյալի խորին խավարից
Ահա առնում ե հողումս հարություն,
Նա, վոր մերժված և բոլոր աշխարհից,
Վորի հիշատակն հանդիմանություն
Լսել ե միայն: Բայց անեծքների
Անվերջ կարկուտը ինձ չե շփոթում.
Սև դրոշմի տակից մաշված ճակատի՝
Յես նրա այրող տանջանքն եմ տեսնում:

Հովհաննիսյանը բոլորովին չի արդարացնում Վա-
սակին, բայց գեղարվեստական վաչլուն եջերում տա-
լիս և նրա հոգու բարդ ու հետաքրքրական յեղեմեջներն
աշնպես, վոր ընթերցողի մեջ վոչ միայն կարեկցու-
թյուն, այլ և համակրանք և զարթեցնում: Պոեման
համակում ե խորապես: Վասակի հոգեկան դրաման
ծավալվում ե և սաստկանում՝ անցնելով չորս հանգույ-
ցից, վորտեղ ուժգին իրար են բախվում հերոսի մար-
տական խոյանքն ու ընտանեկան ոջախի կարոտը, նրա
կորովի հայրենասիրությունն ու քնքույշ զավակասի-
րությունը (Վասակի վորդիները պատանդ եյին պար-

* շմա. Ա. Մ. Գարագաշյան շճնական պատմություն
հայոց, մասն Գ., Թիֆլիս 1895, էջ 132, 139 ու 144:

սիկ արքունիքում և կլիմանդոսիան հայերի աղաքամ-
բության գեղքում), հակառակորդները քաղաքակա-
նության սխալ բնթացքի համոզմունքն ու նրանց անձ-
նոթրարար նահատակիված հանդիտանալու գիտակցու-
թյունը և վերջնապես դավաճանության նկատմամբ զգա-
ցած նողկանքն ու դավաճանած լինելու սոսկումը:

Պսևմայի մեջ իզեոյոգիական տեսակետից խիստ
կարևոր են յերեք հատված. ստաջին՝ այն, վորտեղ ժա-
նապար անուն ու հիշատակ ժառանգած իշխողների
գործունեյությունը յակնարար բնորոշվում ու մերկաց-
վում և, իրրև Ջարյան պայաններ, անառակության
խայտառակ տաճար և արենապիղծ շամբշտ գիշեր-
ներ» . յերկրորդ՝ շարունակությունը կազմող տողերը,
վորտեղ բանաստեղծը բացասական վորակումն և տա-
լիս Վարդանանց «հայդուկային» գործունեյությանը, և
վերջապես Յ-րդն ու վերջինը—պսևմայի խորազնին
ու կծու նախերզանքը, վոր հայ պատմագրական դեմո-
կրատիզմի ամենանշանավոր գրվազներից մեկն և .

Արյան վայրով, տանջանքներով անմահացած,
Ինչպես ցնորք յերևում են որերն անցած .
Յես չեմ կարող նոցա նայել յուռ պարծանքով,
Այլ մի խորին ցավակցության զգացմունքով:
Ի՞նչ մեղ թողին մեր քաջարի դոված նախնիք,—
Լացի, վողբի անփառունակ մի հայրենիք . . .
Յեւ անձրեր ծաղկափսակ վառ փունջերի,
Վոր մանկական բերկրությունով՝ անմխտնելի
Առաջին ենք մենք սարածում, յես մի նշան
Համարում եմ մեր վորքը հողու աղքատության .
Շղթան սիրող սարուկների մի բազմություն—
Ահա նոցա թողած անփառք ժառանգություն:

Այս տողերն անգիր անեյն ու միշտ մտքում պահելը
մեծ ոգուտ կտար վոր միայն հայ անցյալն ուսումնա-

սիրող ծառայամիտ պատմարաններին, այլ և նացիո-
նալիստական ինքնազարծությամբ հասացած պարտի-
զանամուլ քաղաքապետներին:

Յեղեղ ևն բանաստեղծներ, վորոնք անուն ևն հա-
նել մի քանի, յերբեմն նույնիսկ մեկ հատիկ վոտանավո-
րով: Յեթե Հովհաննիսյանն ուրիշ վոչինչ դրած չլի-
ներ, նա հայ պոեզիայի պատմութեան մեջ իրբե անվի-
ճելի մեծութուն կհիշվեր յուր «Սյունյաց իշխանով»,
վոր մինչև հիմա էլ մեր դրականութեան մեջ նմանը չու-
նի յուր տեսակում: Իսկ յեթե նա դրեր այս պոեմայի
նախերգանքը միայն, անաչառ պատմողիւրն այս գեպ-
քում ելի նրա անունը կմտցներ հայ հանրային մտքի
պատմութեան մեջ՝ նրան գտնելով պատմադրական գե-
մոկրատիղմի այնքիսի նշանայսր ներկայացուցիչներ
չաբքում, վորպիսիք ևն Շահամիր Շահամիրյանը, Մտտ-
թեպոս Մամուրյանն ու Արսեն Թոխմախյանը:

X

Ազգայնական հոսանքի գրողներին բնահանրապես
հատուկ և այն մտայնութեանը, թե յերկրի թշխաու-
թեան գլխավոր պատճառը քաղաքական նվաճումն և ու-
տարի կողմից: Սրա համաձայն էլ նրանք մտասաների
տառապանքի ու հարստահարութեան վերացման ուղին
համարում ևն ոտար տիրապետողի լծից ազատագրվելը:
Յեթե չլինի այլազգի բռունցքը, յերկիրն էլի կգտնու-
մի բարեկի դրախա*):

Տեսեսապես յերջանիկ և պատկերացում հատկա-
պես հայ գյուղը, վորի իդեալացումը գտնում ևնք վոչ
միայն հայ վիպադրութեան մեջ (Քաջատուր Արուսյան),

*) Ռոֆֆին Վշահճ վոտանավորի մեջ մինչև անգամ իրբե
գյուղական միջավայրում գործող վաշխառուական կապիտալի-
տերկայացուցիչ դնում և պարսկին կամ մահմեդականին (Համա-
Վնդրուր, 1883, № 8—9, էջ 279—284):

այլև հայ նոր պոետիկայի մեջ, Ռափայել Պատկանյանի, Մեսրոբ Թադիսադյանի և Ուրախակից-Քարեկամի վոտանաժողովներում:

Ռափայել Պատկանյանը «Շինականի յերեկոյան յերգի» մեջ նկարագրում և դյուղական փոքրիկ ընտանիքի բարոր ու դու՛ վիճակը, իսկ «Յերկու պատկեր» վոտանաժողովում՝ դյուղական նահապետական անպարտք ու անկարգ ազգայնականի ծով սունը, վոր կործանվում և ստարի բնութքամբ: Մեսրոբ Թադիսադյանը մի վոտանաժողովի մեջ, վոր ունի ուշադրով «Տանասական» վերնագիրը և վորը մինչև այժմ վրիպել և մեր գրականության պատմությունն ուսումնասիրողների աչքից, հիացած նկարագրում և հայ դյուղի սակավապետ ու ապահով կենցաղը՝ վերջինս հակադրելով քաղաքացիներին կյանքին^{*)}: Վերջապես հիշենք մեր նոր գրականության մեջ հայ դյուղի անդրանիկ իդեալացումը, վոր հրապարակվել և մեղանից մոտ դար ու կես սատջ: 18-րդ դարում, 1795 թվականի ովդան ամսի 30-ին (նոր տոմարով փետրվարի 25-ին) դրած մի վոտանաժողով «Աղգարարի» մի աշխատակիցը, Ուրախակից-Քարեկամը զովերդում ևր դյուղական կյանքը Հայոց աշխարհում, իրեն մի բարեբախտիկ, ստանձնացած, անաղահ ու արդարագործ կյանք, վորտեղ «ստացվածքը բնական» և, աշխատանքը՝ «միարանական» և ավելի ապահով, բուն «ունայն» քաղաքային դրադմունքը^{**)}:

Նման մտայնությամբ ևն տողորված նաև Հովհաննիսյանի մի քանի բանաստեղծությունները, վորոնց նյութը հայ դյուղն և:

Հովհաննիսյանը դեռ պատանի, 16 տարեկան, հիա-

*) Տպվել և ստաջին անգամ կարկաթայի «Աղգարար» հանդեսում, 1845 թ. ապրիլ 23, թիվ 2, էջ 12, և ապա շատ ուշ, 1884 թվականին, Եջմիածնի «Արարատի» № 5-ում, մայիսի 31, էջ 216:

***) «Աղգարար», Մադրաս, 1795, ովդան, էջ 28—29:

ցած յերգում և հայրենի յերկիրը, իրբև մի յերանավետ
վայր, վոր ոժտված և ամեն հրաշայիքներով: Բնարան
ընտրելով «Իմ հայրենիքը տեսե՞լ ես, ասա՛» հարցմուն-
քը՝ պոետն զմայլանքով նկարագրում և բնաշխարհի գու-
նազեղ համատեսարանը՝ սրա մեջ հատկապես հիշա-
տակելով շեն ու ծաղկած գյուղը:

Տեսել ե՞ս արդյոք այն բլուրները,
Ուր ճոխ ծաղկում և մշտական գարուն,
Կանաչում թաղված այն այգիները,
Ուր իրբև գոհար խաղողն և հասնում:

Տեսել ե՞ս դաշտեր, մարգագետիններ,
Ու բացված այնտեղ վառ շուշան, մեխակ,
Շնորհատու արև, վոսկի նշույլներ
Յեվ միշտ սիրաշունչ յերկինք կապուտակ:

Տեսել ե՞ս գյուղը հովտի մեջ մենակ
Յեվ շուրջը փռված շքեղ պարտեզներ
Յեվ վոսկի հասկեր և խաղաղ վառակ,—
Լսել ե՞ս քաղցրիկ արտուտի յերգեր:

Մի ուրիշ վոտանավորի մեջ բանաստեղծը տալիս և
հայրենի բնության նկարագրության կողքին հայ գյու-
ղական միջավայրի նահապետական գծերը: Այս նկա-
րագրության մեջ նա թեև քաղաքի անունը չի տալիս,
բայց տողամեջ զգացվում և, վոր գյուղի՝ նշվող տըն-
տեսական ու բարոյական հատկությունները չկան մի
այլ միջավայրում, վոր անշուշտ քաղաքի վոյորտն և:

Այնտեղ, վո՛հ, այնտեղ գերդ ոճ վայրարուն
Կանաչ դաշտերով սահում և Քասախ,
Այնտեղ գերդ գոհար միշտ արևասուն
Խաղողն և հասնում վորթի վրա մատաղ.

Այնտեղ աղբյուրներ վճիտ, ջինջ, բյուրեղ,
Դալար ափերում կարկաչուն վտակներ,
Այնտեղ բնութիւն մանուկ հրաշագեղ
Միշտ պարզեում և ձեղ իր բարիքներ:

Թռչում և՛մ այնտեղ, ուր յերջանկանալ
Կարող և մարդը անխարդախ սիրով,
Ուր խաբերալին կարծիք վոխակալ
Պատժում և անխնա ամոթո սրով:

Թռչում և՛մ այնտեղ, ուր մարդ չէ կարող
Մնալ անտերունչ, անհույս ու անտուն,
Ուր խեղճի համար սիրտը չունի վոխ,
Ուր թշխանն ունի մխիթարութիւն:

Գյուղական միջավայրում մարդ չի կարող մնալ ան-
տերունչ, անհույս ու անտուն. շինական աշխարհում չկա
վոխ ու ատելութիւն խեղճի ու աղքատի հանդեպ. դյու-
րում անճարն ու թշխաւը մխիթարութիւն ևն դտնում:

Մի ուրիշ վոտանավոր, «Հատիկը», մեզ հիշեցնում
է, վոր դյուղումն էլ հոգս կա, այնտեղ էլ կյանքը ծափ
ու ծիծաղ չի միշտ. դյուղացին «դարդ» ունի, նրա սիր-
տը «Չարդված» է: Բայց ինչո՞ւ: Գյուղացու դարդը դյու-
ղի անտեսական հակամարտութեան հետեանք չի, այլ
առաջ և դալիս բնութեան պատուհասից ու այն դիտակ-
ցութիւնից, վոր յերկրադործի աշխատանքը կախված է
բնութեան պատահականութիւններից: Կարող է անձրև
չգալ. այն ժամանակ հարկավոր է ծով դարձնել արևա-
ճակատի քրտինքը, վոր հատիկը ծարավ չմնա: Գյուղա-
ցու դարդը չքանում է, յերբ նա հնար է ունենում հատիկը
թաղելու, արտը ցանելու: Նրա Չարդված սիրտը հան-
դատյան քուն և վալելում, յերբ սերմը ծլում է, և արտը
ծածկվում արեծածան սալանով:

Ասացինք, վոր դյուղացու «դարդն» ու «սրտի Չարդ-
ված լինելն» առաջ և դալիս այն դիտակցութիւնից, վոր

նրա աշխատանքը կախված է բնութեան պատահականութեաննէրից: Բայց այս արտահայտութեանը սխալ է: «Հատիկի» գյուղացին այսպէս չի դատում. նա մատերիալիստ չի. նա իրական գյուղացի չէ, կրօնական աշխարհայացքով տողորված: Հատիկը կրկանաչի, յեթե աստված ուզենա: Անձրե կգա, յեթե արամայրը գիժա: Արե կլինի, յերբ նա սիրով նայի գեղջուկի արտին: Բայց այս բոլորը կարճ է չլինել «մեղքերի» պատճառով, ուստի հարկավոր է մոմ վառել, խունկ ծխել, աղոթել, ապաշխարել ու ելի աշխատել: Գյուղի թշվառութեան պատճառը մեղքն է ու պատահասը: Գյուղը կերջանկունա աղոթքով ու աշխատանքով:

«Հատիկը» տողորված է կրօնական վողով: Բայց այս նրա հատկանիշնէրից մեկն է, սակայն վոչ գլխավորը: Նրա գլխավոր հատկանիշը գյուղի տնտեսական-հասարակական հակամարտութեաննէրի անտեսումն է:

Կրօնական վողի ուներ գերման գյուղացիական շարժման առաջնորդ Թոմաս Մյունցերը: Կրօնական վողի ուներ ուսույթական սոցիալիզմի հոկանէրից մեկը— Սեն-Սիմոնը: Ինչպէս Պլեխանովն է հիշեցնում, կրօնական վողի ունէրին նույնիսկ գեկարբիստնէրից մի քանիսր: Դարձյալ, կրօնական վողի ունեն Ղազարոս Աղայանի «Աերմնացանն» ու Հովհաննէս Թումանյանի «Գութանի յերգն» էլ: Այս յերկսի վտանավորի մեջ էլ գյուղացիք վարի ու ցանքսի ժամանակ դիմում են ատժուն փառարանութեամբ ու աղերսանքով: Այս չի խանդարում, վոր նրանք պատմեն գյուղական պարտքի ու պարտատիրոջ, ավազակի ու քոսվայի, հարկի ու թովջու, տկոբութեան ու քաղցածութեան մասին էլ:

Այս վերջին հանգամանքն է, վոր Աղայանի ու Թումանյանի գյուղերը դարձնում է Հովհաննէսյանի գյուղերդի պարողիստ:

Հովհաննէսյանի ամբատնտես գյուղացու աշխատեղի մեջ աղոթքի կողքին չի դրացվում տնտեսական հարվածնէրի ու սոցիալական գահավիժման սոսկումը:

Աղայանի ու Թումանյանի ստեղծագործ գեղջուկները աշխատերգի մեջ ազդեցիկ հետ լսելի յեն չքավորութեան շեմքին կանգնած աշխատավորների անքոցն ու դառնութեանը:

XI

Կենտ մի հաստ լոտանավոր ունի Հովհաննիսյանը, վոր ցույց և տալիս դյուզն ուրիշ կողմից, քան մինչև այժմ յերևում էր նրա յերկերում: Այս բանաստեղծութեանը «Դյուզի ժամն» է:

Արևամուտին դյուզական յեկեղեցու դանդերը վարկում են. սպոխտավոր շինականները ժամ են շաապում. նախրի գալու ժամանակը մտա է. գեղջուկ մայրը հորդորում և յուր մանկահասակ աղջկանը, նազլու յին, վոր գնան յեկեղեցի ազոթք անելու:

Ինչի՞ համար պետք և ազոթեյին գեղջկուհի ծնողն ու փոքրիկ նազլուցն:

Ախ, նազլու ջան, չեա խմանում,
Եզուց ելի ադան կզա,
Նորա սիրտը միշտ անկշառում
Ե՛լ ամալի պես պիտի գռռա.

«Շուտով, Գրիգոր, փողերը բեր,
Ելի՞ չկա. կովդ հանիր»...

Ախ, նազլու ջան, այն ի՞նչ բան եր,
Մի՞տղ և հերու... Տեր, դու փրկիր:

Հայրիկդ արդեն դնացել է,
Վոր փող ճարի. յե՞րբ պիտի դա.
Տեսնենք մեկը խղճացե՞լ է...
Ախ, սև որը Տերն ել չտա:

Բարե մարդիկ միշտ կլինին,
Հայրիկդ հեաը փող կբերե.
Փողը կտանք չար աղային,
Վոր մեր բիժոն ել չխլե:

Նաղլույի ձեռնադասիս հայրը, Գրիգորը, փոզ և վերցրել գյուղական վաշխառուից, բայց ժամանակին չի կարողացել պարտքը հանգցնել. անկշտում աղան ուղել և փոխարենը կովը քաշել, տանել. Նաղլույի հայրը մի կերպ հետաձգել և տան ապրուստը հասցնող կովի դավթումը. գնացել և ստարություն, փոզ ճարի, բերի, պարտքը տա, վոր շար վաշխառուն է՛լ բիժոն չբխի, և գյուղացու ընտանիքը չմնա անկալ ու անհայ:

Գյուղի՝ դանդաղ ու տխուր հնչող գանգերը վաշխառության ու դրամատնտեսության մուտքն են գուժում գյուղական աշխարհը: Գրիգորները, վոր միամտորեն կարծում եյին, թե հատիկը ցանկելով իրենց դարդն ել հետը թողել են և կամ թե կարող են հանդիստ քուն վաշելել, յերբ արդեն արտը ծածկված և ալեծածան դարալիքով, հիմա ընկել են մի նոր, ալեյի գորեղ ու անխնա «սրբի» ձեռ: Առաջ տիրամերն եր գյուղի «աղան». հիմա դրամատերն և գյուղի «սուրբը»: Սրան ալեւս չի կտրելի շահել խունի ու մամով. սրան հարկալոր և տոկոս ու վաշխ. աղոթքն ու ծնադրությունն ել չեն փրկի. պետք և տալ կովն ու վերջին բիժոն ել:

«Գյուղի ժամի» մեջ ել տեսնում ենք աղոթքի արամադրություններ, բայց հիմա աղոթողը շատ ավելի յե մտահոգված, քան «Հատիկի» մեջ: Այստեղ ել դանում ենք դեռ վորոշ լավատեսություն, միամտություն այն մասին, թե «Թշվառին» միշտ կա մխիթարություն. ապացույց՝ գեղջկուհու այն խոսքերը, թե «բարի մարդիկ միշտ կլինեն, հայրիկը հետը փոզ կրեր»: Բայց միաժամանակ նշմարվում են կասկածի խայթոցներ ել. «տեսնենք՝ մեկը խղճացե՞լ և. ախ, սե որը Տերն ել չբտա», «եղուց տեսնենք, վոր վեր կենանք, ի՞նչ նոր արե և մեզ ծաղում»:

Յեթե «Հատիկի» շինականը հողի վրա նստած տընտեսատերն եր յուր վար ու ցանքով, յուր կալ ու կուտով, «Գյուղի ժամի» Գրիգորն արտից ու կալաակեղից զրկված մի գյուղացի յե, վոր ընտանիքը մի բիժոյի հույսին թողած՝ բռնել և տարերթի ուղին:

«Գյուղի ժամը», վոր կինո-նկարի պես պարզ ու ակնառու տեսարաններ ունի և մի փոքրիկ համերգ և, վորտեղ լայնում են գյուղի դանդերի զարկերը, ժամավորների վտանաճաները, մոտեցող նախրի ըստաչուն թափորը, վաշխառույի վորտտի արձագանքները, Նազյուլի մանկական շշուռնն ու վերջապես, իբրև թշվառության հակադրություն ու դասն հանկերգ, չքավոր մոր մորմունջը—

«Տե՛ր փառքդ շատ»...—

մի հոյակապ նախերգանքը կարող եր լինել պոետի մի այնպիսի դրական գործունեյության, վորը նրան կտար վոչ թե Նազստնի, այլ... Նեկրաստոյի հազվագյուտ դափնիներ:

Բայց այստ՛ս, վոր հանդամանքների բերումով Հովհաննիսյանը չզնայ այս ճանապարհով: «Գյուղի ժամը»—Աղայանի «Սերմնացանի» ու «Ճախարակի յերգի» և Թումանյանի «Գութանի յերգի» հետ դաշնակիտոյ այս ընտիր բանաստեղծությունը— նա այնքան քիչ եր դնահատում հետագայում, վոր այս գողտրիկ վտանավորը 1908 թվականին չըմտցրեց յուր «Բանաստեղծություններին» նոր հրատարակության մեջ:

Անկասկած, նա հեռավոր Մոսկվայից շատ ավելի լավ եր տեսնում անավեր Գրիգորներին, ծեծկլած դեղջիուհիներին ու խեղճիկ Նազյուններին...

XII

Կանանց հարցը, վոր այնպես նկատելի ու նույնիսկ խոշոր տեղ և բռնում արևելահայ բանաստեղծներին յերկերում, Հովհաննիսյանը բոլորովին չի շոշափում: Նա կնոջ բերանից գրած յերկու վտանավոր ունի ընդամենը, մեկը վերոհիշյալ «Գյուղի ժամն» և, իսկ յերկրորդը՝ գեղջուկ մոր վոյրն և յուր մեռած զավակի վրա («Աղիդ բալա, ջան բալա»): Նրա յերկերի մեջ բացակայում և նաև աշխատող կնոջ պատկերը:

Մրա փոխարեն նրա բանաստեղծությունների մեջ նշանավոր տեղ է բռնում սերն ու սիրերգը: Տանք ընդհանուր գծերով նրա սիրերգի սոցիոլոգիական բնութագիրը:

Նախ՝ դիտելի յե մի գլխավոր կետ: Վորքան սարքկացած է հասարակության մեջ անհատը, այնքան սարքկարար է մտանում բանաստեղծը յուր սիրահանին (հմտ. Սայաթ-Նովա): Սիրային քնարերգության մեջ Հովհաննիսյանն իբրև նոր ժամանակի գեմոկրատական հոգեբանության տեր մարդ չի մտցնում ծառայական վերարևմուտք. նա ցածից, գեանաբար չի նայում սիրած աղջկան: Նրա սիրերգի մեջ բոլորովին բացակայում է սիրուհու շքեղ հազուատի ու ճոխ զարդարանքի թվարկությունը, վորի ներկայությունն ավելի շուտ չտեսի հոգեբանություն է ցուցադրում (հմտ. Սայաթ-Նովա): Նրա սիրային վրտանավորի մեջ շատ յերկրորդական տեղ է աված նաև արտաքինի մանրամասն նկարագրությանը (հմտ. Սայաթ-Նովա): Հազվադյուտ անգամ է նա տարվում Ֆիդիկական գեղամասերի ու սրանց հարուցած հույզերի նկարագրությամբ («Աննման ես, ինչպես հրեշտակ յերկնային»): Հմտ. Սայաթ-Նովա): Ընդհանուր առմամբ նրա յերգերի մեջ չկա այն մարմնարդձ կիրքը, վոր արևելյան պոեզիայի հատկանիշն է համարվում, այն ինչ իրոք կայվածատրական վերին խավերի հոգեկան զարգացման ստորին աստիճանի արտահայտությունն է ու նրա թողած ժառանգությունը: Նրա ուշը գրավում է գեղեցիկուհու հոգեկան աշխարհն էլ: Վերահիշյալ բոլոր հատկանիշների շնորհիվ նրա սիրերգը հազվադյուտ բարձր կուլտուրական կոլորիտ ունի և զգալի յե դարձնում, վոր բանաստեղծը վուճ թե կրքով կիզող տարվածույի գերին է, այլ սիրով ջերմացնող կին մարդու կարտան է քաշում:

Վորքան թույլ են տալիս դատել բանաստեղծի տրած մի քանի ակնարկները, նրա սիրո ստարկան անաշխտա գասակարգից է.

Ջերմսցում սնած դու վարդ նաղելի,
Սրցունքի մի շիթ չե կաթել թշիղ,
Կյանքի փոթորիկն անվերջ, ահուկի
Դեռ քո շրթունքից չե խլել ժպիտ:

Պսևար, վոր դյուզական միջավայրի գավակ լինելով
յավ ծանոթ է սասրին խափերի կանանց չարքաշ կյանքին
ու տատապանքին, մի հրաշայի սիրերզի մեջ գիմելով
փավկասուն ազջկան՝ տենչում է, վոր սրան համակի
սիրս զգացումն այն աստիճան, վոր գոնե այս դեպքում
նա զգա, թե կյանքում հոգս ու վիշա ել կա:

Յեվ իմ միակ ցանկությունն է, վոր անրիծ
Սիրտդ զգար սիրո հրճվանք և թախիծ,
Յեվ դուրդուրանքն հասկանայիր զեփյուռի
Յեվ սիրտդ թունդ զարկել տար բույրը վարդի,
Յեվ զգայիր, վոր բացի խաղն, անհոգ կյանք,
Կա տկամա արցունք և վիշա և տանջանք:

Մինչդեռ Սայաթ-Նովայի «զայում գողալը» պայա-
տական զեղուհի յե խաս ու ավառի, ակնունքի ու մոս-
կեղենի մեջ կորած, նիստ ու կացով, հոգով ու զգաց-
մունքով մի խկական իշխանազն, մի բարձրահուն խա-
նուհի, իսկ Ավետիք Իսահակյանի սիրուն Ջարսն մի
պարզիկ ու նախշուն զեզջկուհի յե սարերի հովսցում
կամ բոտանի քողտիկի մեջ, շրջապատված սեղ ու
ծաղկունքով, ուլ ու գառնուկներով և խաղերն ու լելե-
ները շրթունքին, — Հովաննիսյանի նաղելի կույսը բուր-
ժուական ընտանիքի ճոխակենցաղ սրիորդ է, վոր յուր
սայրնական ժամերն անց է կացնում նույն շրջանի «պա-
տանինների անհոգ շրջանում», վորոնք «չուրջ պատած»՝
նրան «հաճոյանալ են ցանկանում»: Այսպիսի պչրուհին
խհարկե չեք կարող դնահատել հոգեկան առավելու-
թյունները և կարեկցել կամ սիրել մի յերիտասարդ
պոետի, վորը հասարակ միջավայրից եր:

Քեզ մոտեցա սեր հուսալույ՛,
 Պայծառ դեմքիդ նայեցի,
 Յես—խավարած վշտի ամպով,
 Դու—արշալույս նազելի:

Յես ասացի. «Ինձ քույր յեղիբ,
 Յեղիբ ընկեր ցավակից,
 Սերբո՛ւ, յերգա դու ընդունիբ
 Նվեր տանջված մի սրտից:»

Բայց դու—զավակ փարթամության,
 Ջհասկացար յերգա աղքատ,
 Դու—նույն անհող թռչնակ գարնան,
 Յես— նույն յերգիչն հուսահատ...

Բանաստեղծը դառն փորձով հասկացել և, վեր մինչև անգամ սիրո հարցերում մասսայորեն վերցրած կեցուցումն և վորոշում գիտակցությունը: Փարթամության զավակի կեցության հետևանք և նաև գիտակցությունը նազելի կույտի, վորը չի հասկացել և գնահատել այն յերգերը, վորոնցից աղքատության հոտ և դալիս յեղել:

Շարունակությունը վաղուց արդեն պատմել և Պատկանյանը «Տիկիկն և նաժիշտ» վեպի մեջ.

«Ասատուր աղայի յերեսը ուղրտնեցայ, մեռելի դույն յեղայ. աչքերը արյուն կոխեց, ճակատը քրտինք տվայ:

— Դո՛ւ... Սոֆիայի՛ն... դո՛ւ... իմ, իմ, իմ Սոֆիայի՛ն... իմ Սոֆիան քու կիներ իլլե՞... իմ Սոֆինկեն, աղա Ասատուր Քեյթումալովի աղջիկը մեկ սալմաստեցի—խոյնեցիկ կնիկ իլլե՞ ի՛ն՛... ա՛տա, խելքդ տանել ե՞ս տվել, թե՞ ինձ դիժ ես կարծեմ...»:

XIII

Կնոջ ի՞նչ իդեալ ունի պոետը, այսինքն ի՞նչ տեսակ կիներն և նրա աչքում ամենարարձրը: Այս կետը պատմականորեն ըմբռնելու համար մի փոքրիկ ակնարկ

մնք և տեսնենք, թե մեր մեջ տարրեր դարաշրջաններում կանացի ինչ տիպեր են կնոջ իդեալ համարվել:

Հայ ժողովրդական վեպի— «Սասմա ծուերի»— մեջ կնոջ իդեալը Սանդուխտ խանումն է (հին հայոց հեթանոսական դիցուհի Անահիտ Տիկիւնը), վոր վոչ միայն հողատար ամուսին և ու դթոտ մայր, այլև տոհմասեր կին ու առնառիբա սագմիկ, ինչպես Հայաստանի հին բնիկ ժողովուրդներից մեկի— ամազոնների (ամասյաց կամ մասյաց) կանայք և յին, ամազոնուհիները*):

Միջին դարերում կնոջ իդեալը կրոնի համար նահատակիսց կիներն է, պատմադիր Յեղիշեյի փառապանծ «Վափկատուն տիկիները Հայոց աշխարհի, վորոնք մոռացան կանացի տկարութունը և հոգևոր պատերազմի մեջ առաքինի արուներ հանդիսացան»: Այս շրջանից իբրև յերկրորդ որինակ հիշենք Կոմիտաս Աղցեցու հոմերական տաղը Տրդատի դեմ պայքարող կույսի ու ընկերների մասին. •

Թուլացան | կորովիք | հաստածիդ | աղեղանց,
Յե՛վ տկար | կանայքն | վառեցան | զինճու,
Թագավորն | պերճացյալ | զորությամբ | և փառք
Ի մանուկ | ի կուսն | պարտյա՛լ | ամաչեր:

Նորագարում հայ բուրժուական պոեզիան փառաբանում և ազդասեր կնոջը: Այս պոեզիան մինչև անգամ Յեղիշեյի կրոնասեր կանանց նկարագիրը փոխում և «յուր պատկերի համաձայն» և Շահաղիզի քնարով նրանց գովերգում իբրև ազդասեր կանանց: Յերիտասարդ Ռաֆֆին «Սալբու» մեջ մի վոտանափորում տալիս և պարսկահայ կնոջ յերկու տիպ՝ պարզ մատնանշելով, թե սրանցից վորին և գերադասում, իբրև հայ կնոջ իդեալ:

*) Հմտ. Ամասիա անձնանունն ու սրա հետ կապված Մաթիք-Մասյաց-Մասիս տեղանունը:

Քնքու յ ձեռները հարեմ ին սիրուն
Հինան ներկում և վարդապույն կարմիր-
նա այդ ձեռքերով հրապուրելի գիտե
Ամուսին խանր ջերմ, հեշտախնդիր:

Բայց յես սիրում եմ արյունով ներկված
Նուրբ մաախինները իմ սիրուհիս,
Յերբ վոր նա ինձ հետ պատերազմում և
Վաստիների դեմ իմ անբախտ աղբիս:

Հովհաննիսյանը շունի Ռաֆֆու սագմիկ հոգին,
բայց բա և յության իրկալական կնոջ նույն տիպն և գու-
վարանում, ինչ վոր Ռաֆֆին, Շահադիդն ու մյուսնե-
րը: Նա էլ և վոզեւորվում էրդ գարի հայ «աղպատեր»
կանանցով:

Փափկասուն կանայք, նազելի կուսան
Շքեղ մազերից վիրակապ հյուսած,
Հեղ ճակատներին վեհ սիրո նշան՝
Դաշա են շտապում պաճուճանք մոռցած:

Նրա էլ իրկալն այն կինն և, վոր մասնոցված և յուր
հայրենիքի թշվառ կացությամբ: Այս պարզ յերևում է
մանտվանդ նրա այն վոտանավորի մեջ, վոր գրված է
Շահադիդի «Ինձ մի սիրիր» ու նազստնի «||^o ԻՐԵՆ Ի ԴՅՈՒՅՆ»
բանաստեղծությունների աղբեցության ասկ:

Յես քեզ սիրեցի, բայց չեմ կամենում
Տալ սիրաս, հոգյակ, քեզ բնավ գերի—
Մի անկյուն նորա անմեկին խորքում
Այլ սիրո համար յես կամիմ պահել:

Տես, թշվառության հազարալիզու
Բոցր բորբոքված խնդրում և զոհեր,
Տես, այնտեղ խոնած իրար մաս ահու
Վերջին են սպասում քանի՛ անբախտներ...

Յեկ դոցա համար յես սեր եմ պահում,
Այդ ճահատողրի խորթ վորդոց համար,
Վարոնց առաջին դուսր չե բանում
Մխիթարության՝ քարասիրտ աշխարհ... 1

Տուր ինձ, սիրելիս, և քո սերն անրիժ
Այս հոռաչանքի հովիտը տանեմ.
Գուցե արցունքը ցտփած աչքերից,
Մաշված ճահատից թախիժը խլեմ:

Հովհաննիսյանի յերգած հայ իդեալական կինը, ճիշտ է, չունի և կարող է չունենալ «արյունով ներկած նուրբ մտախկներ» և չպատերազմել «ազգի վոսոխների դեմ», բայց նա ունի և պետք է ունենա կին քողաքացու դիտակցություն ու կարեկից սիրտ՝ հանդես գալու «հոռաչանքի հովտում» իրրև կուրտուրական մշակ ու գթության քույր բառիս ամենալայն տուժումով*):

XIV

Մեզ մնում է շոշափել մի հիմնական հարց ել, այն է՝ թե դասակարգային հասարակության սոցիալական կյանքի եական հատկանիշը, տնտեսական ու հանրային

*) Հայ գրականության նորագույն շրջանում, բանվորական պոեզիայի մեջ հրապարակ և գալիս հայ իդեալական կնոջ մի քոլորովին նոր տիպ: Հակոբ Հակոբյանը ընդ առաջինս պոեմայի մեջ հնչեցնում է գործարանի ու սոցիալիզմի գաղափարով սուգորված կնոջ սիրերգը.

Յեթե իրավ է, նազելի սիրուն,
Վոր քո աչերը Չերձ կլանքի կարոս
Մի նոր իրական աշխարհ են փնտրում
Յեկ ինձ խոստանում կլանքի առափոս,
Արի տանեմ քեզ իմ սիրածի մոտ—

Դեպի գործարան

Արի տանեմ քեզ...

անհավասարութիւնը կամ ավելի ճիշտը՝ հակամարտութիւնն ինչ արձագանգ ե գտել Հովհաննիսյանի բանաստեղծութիւնների մեջ:

Պետք ե ասել, վոր հայ պոեզիայի մեջ սոցիալական անհավասարութիւնն ու դասակարգային հակամարտութիւնն յերևույթը քիչ անգամ ե յերգի նյութ դատել, բայց այդպիսին դառնալիս՝ բովանկան ուժղին բողոքի շեշտով ե արձանագրվել: Այս կարգի գրված քներից հիշատակելու արժանի յեն 13—14 դարի տաղերգու Յրիկի «Գանդատը», Ռաֆայել Պատկանյանի «Գանդատ բախտին», Թերզյանի «Առ մայրն իմ», Ռաֆֆու «Աստված իմ, աստված, բարերար արտված» վրտանաւորը (տպված ե «Մայրու» վերջում), Դուրյանի «Սիրեցեք ըզմ իմ խանս» ու Աղայանի «Զմեռը»:

Յրիկի, Պատկանյանի, Թերզյանի, Ռաֆֆու, Դուրյանի ու Աղայանի նման Հովհաննիսյանն էլ յուր յերգերում լսելի յե դարձնում սոցիալական ծայրահեղ անհավասարութիւնն իրողութիւնը:

Հովհաննիսյանը Յրիկի ու Ռաֆֆու պես յուր խոսքն ուղղում ե անմիջապես աստծուն.

Բայց մարդիկ վաղուց մտոցած քո խրատ
Դահիճ են դարձել յեղբարցն հարազատ.
Ուբացած անմահ խոսքդ մարդասեր՝
Հզորն աշխարհին դարձել ե արդ տեր,
Յեզ վոքքը չունի այլևս բերան
Կարդալ սողմոսը քո որհներգութիւն:

Այն խոսքերում, վոր հեղինակն ուղղում ե քաղաքացի պոետին, նկարագրված ե անհավասարութիւնն նույն իրողութիւնը, ե այս նկարագրութիւնն մեջ շեշտը գրված ե տնտեսական կողմի վրա.

Տեսնում ես շուրջդ կարիք ու զրկանք
Յեզ սարկութիւնն ճնշող շղթաներ,
Յեղբարքդ կյանքից շտնսած գգվանք
Վաղ ճաշակել են հոգեմաշ ցավեր:

Մարզկանց մի խումբըր դահիճ և, մյուսները՝ զոհեր: Հզորն աշխարհի անըն և, իսկ փոքրը ծառունի խրափունք չունի: Ծորըն ամենուրեք կարիք և, զբկանք, չդիթա ու ցափեր: Այսպիսով դուրս և դայիս, փոր անհատասարությունը, հակամարտությունը, հարստահարությունն ու տոտապանքը, փոր պոետը նկատում եր միայն տարրեր ազգությունների արտաքին հարաբերությունների շրջանում, միջազգային ստպարեզում, տեսանելի յեն նուև հասարակությունների ներքին կյանքում, ներազգային իրականության մեջ և: Ծահերի այս բախումը կա

Յեւ այս կովի մեջ՝ ահեղ, սոսկաչի,
Ուր փոք գրկիվածը նենդավոր բախաից
Անհետանում և, վորպես մի ճրճի՝
Հաղթիված վոսկեզոժ յերկաթի բաղկից,
Ուր միայն մեկի ծառն յերջանկության
Բուսնում և տասի ամերակներից,
Ուր մի փայտը ծաղկում և միայն
Հարյուրավորի աղի արցունքից:

Մասնավոր սեփականության վրա հաստատված հասարակությունների մի սպանիչ բնութագիր և այս, փոր վոչ միայն հավաստում և սոցիալական հակասությունների ու անասական անհատասարության իրողությունը, այլ յերեւելիները կշռի հակադիր թաթերի մեջ և դնում և մատնանշում, թե սրանցից մեկի իջնելն և, փոր բարձրացնում և մյուս թաթը, և բնդհակառակը:

Ուրե՞մն:

Ի՞նչ պետք և անել այս դեպքում:

Ի՞նչ հույս կա,

Թե կցամքի դառն արտասուք,
Լույս կդառնա այս սև դիշեր,
Կիարատվին կսկիծ ու սուղ,
Կդա մայիս շորհարեր:

Նախ տեսնենք, թե ում կողմն և բանաստեղծի համակրութիւնը— վոսկեզոծ յերկաթե բազուկներէ՞, սակալաթիւ ժպտացող յերջանիկներէ՞, թե՞ նենգավոր բախտից զրկվածներէ, աղի արցունք թափող բազմութիւններէ:

Գրեթե դեռ պատանի, կյանքի դործունեյության շեմքը դեռ վրտ չդրած՝ 19 տարեկան պոետը յուր առջև տեսնում է յերկու ճանապարհ. մեկը տանում է դեպի բարոր ու անդորր կյանք, իսկ մյուսը՝ դեպի անդուլ աշխատանք, կատաղի պայքար ու դառն զրկանք: Այս վերջինում արդեն չկան «կանաչ պուրակ», «թռչնոց մեղեդի», «աշագեղ կույս».—

Վոչ, արյուն արցունք, լքյալ հաւաչա՞նք,
Անտեր ամբոխի անվերջ տառապանք,
Արդար վաստակով մշակած գեախն
Այլարի մատնած—ահա իմ բաժին:

Յերկու սազարեզի այս հեռանկարներին աչքը հասած՝ պատանի պոետը տարակուսում է և անկեղծորեն արտահայտում յուր տատանումը.

Յեւլ յես կանգնած եմ և խոր մտածում.
Կյանք, ինձ յերկուսից մո՞րն ես պատրաստում:

Բայց շատ ժամանակ չի անցնում, և ահա յերիտառարդ բանաստեղծի յերգերում գտնում ենք որհասական վճիռը.

Բայց վոչ, չկամ իմ գլուխ խոնարհել
Աբյուռնով կանգնած մեծափայլ կուռքին
Յեւլ վոչ կարող ե իմ սիրտը գրավել
Շլացնող փառքի փշահայու դավնին:

Իմ հոգու ձայնին յես հավատում եմ,
Յեւ պղծատութեան և յերգի համար
Յես իմ դրոշակն ահա պարզում եմ,
Յեւ աշուհեան հավատս պայծառ:

Սրան հետեւում և պոետի սիրուն գեղարացիան,
վորը թեև վարոշ անարոշութեան և պարունակում,
բայց աշուհեան յիստ պարզ և յերկրնորանքի
յուժման տեսակեացից.

Մնաք բարե, արե, դարուն,
Յեւ խնկարույր ծաղիկներ,
Կարկաչահոս փտակ սիրուն,
Կանաչադգեստ բլուրներ:

Մնաք բարյալ, համբույր և սեր,
Դեմքով հրեշտակ կույս չքնայ,
Վայելչութեան պայծառ ժամեր,
Քաղցր ժպիտ, կյանք մատաղ:

Աղքատութեան յես սիրեցի,
Խեղճի կացր, հառաչանք
Յեւ քնարս նվիրեցի
Վիշտ յերգելու և տանջանք:

Պոետի դիրքն ակներև և: Նա ուզում և խեղճերի,
ուղբատների դատի պաշտպան կանգնել:

Բայց ի՞նչպես, — ահա հարցերի հարցր, վոր
պետք և վճռել:

Իրականութեան ամենափխտական, ամենից արմա-
տական գնահատութեանն անգամ հաշմանում և, յերբ
սրան չի հետեւում գործնական թելադրանք իրականու-
թեանը փոփոխելու մասին:

Արդ, ի՞նչ և առաջարկում Հովհաննիսյանի պոե-
տիան սոցիալական խոցերը դարձանելու, անտեսական
հակամարտութեանները չքացնելու և աղքատութեանն
ու տառապանքը վերացնելու համար:

Ինչպես վոր արեապաշտ յեղգին արևի ձևը, շրջապիծը, սրբազան, նվիրական ձև համարելով՝ չի հանդերձնում սրբապղծել, արորել, շնքել ու դուրս դալ յուր շորս բոլորը յաշած խազից, վոր բառի բուն մտքով կախարդական շրջանակ և նրա համար, այնպես էլ Հելի-հաննիսյանի մուսան չի խիղախում նայելու մասնավոր սեփականութեան սահմաններից այն կողմը: Քաղաքատնտեսական տերմինով վորակելով պետք և ասենք, վոր նրա վոտանավորներն էլ բանաստեղծական արտահայտութեաններն են այն հումանիտար, մարդասեր դպրոցի հոգեբանութեան, «վորը սրաին մտա և ընդունում դոյութուն ունեցող արտագրական հարարերութեանների վատ կողմը», «աշխատում և խիղճը հանդատացնելու համար թեկուզ մի քիչ մեղմացնել իրական հակադրութեանները», «ժխտում և հակամարտութեան անհրաժեշտութեանը» և «ցանկանում և բոլոր մարդկանց բուրժուա դարձնել» (Կարլ Մարքս): Հովհաննիսյանը չի կարողանում հասու լինել սոցիալական հակասութեանների ու տնտեսական հակամարտութեանների վերացման այն արժատական ճարին, վոր և՛ հենց վոսկեղոծ յերկաթե բազուկների խորտակմամբ հանրային արտադրութեան կազմակերպումը նենգավոր բախտից դրկվածների միջոցով: Նա չի կարողանում նշմարել մասնատիրական գույքային հարարերութեանների շրջանակները ջարդ ու բուրդ անելու անառարկելի անհրաժեշտութեանը, ուստի և դադաված՝ թշվառների ձեռքը տալիս և մի թըշվառ պեղատոմս, վոր հազարամյակների խուհացած ու անազգեցիկ վաղեմութեան ունի:

Այս դեղատոմսի անունն և քրիստոնեական սեր ու ավետարանական հաշտութեան: Հայ պոեզիայի պատմութեան մեջ այս առաջարկը նորութեան չէր անշուշտ: Հիշատակենք այս կարգի մի նշանավոր նախադեպ, վորը թեև ուշադրութեան չև արժանացել մինչև որս, բայց

մեր հանրային մտքի պատմութեան համար շատ լուրեր եւ :

Հովհաննիսյանից մոտ կես դար առաջ Ալիշանը 1849 թվականին գրած մի կուս վոտանավորում*) ցափով ու դայրույթով նկարագրելով 1848 թվականի հեղափոխական շարժումներն ու քաղաքական փոթորիկող իրադարձութիւնները և այս բոլորին տալով բացասական գնահատութիւն՝ սրանց պատճառը համարում եր քրիստոնեական կրօնի թուլանալը, ուստի և կոչ եր անում ասածուն, վոր սա վերջ տա յերկնային իտալական գործադուլին, թողնի տկանատեսի դերը, ակտիվ միջամտի Յեղրոպայի գործերին և վերահանտատի խաղաղութիւնը համաշխարհում :

Ինչպէս անկասկած ցույց են տալիս Հովհաննիսյանի մի շարք վոտանավորները, նա ևլ սոցիալական ծովի փոթորիկի դոս այիքներն Ալիշանի նման ուզում ե իջեցնել ու հանդարտեցնել քրիստոնեական սիրո յուղը թափելով խռովահոլչ (ջրերի վրա*) :

Հայ հանրային մտքի զարգացումն ու սրան դուզընթաց հասակ աւնող հայ նորագույն պոեզիան չը գնացին նրա նշած ճանապարհով :

Հովհաննիսյանից մոտ մի տասնամյակ հետո գրա-

*) «Նվազք», Բ. սրակ, Վենետիկ 1885, էջ 111-116, «Խաղաղութեան ձայն հնչեցի» վերնագրով :

*) Դժբախտաբար կարելի չե սակ ավելին ել : Հովհաննիսյանը յուր բանաստեղծութիւնների մեջ մեծ տեղ եր հատկացնում նաև հայ յեկեղեցուն ու մանափանդ Եջմիածնին : Ել ավելի ակզվելով կղերական մթնոլորտից, վորը նրան խրախուսում եր մայրավանքի լաուրեսատը դառնալու, և հետևելով Առաքել Բաղիշեցուն, Սիմեոն Յերևանցուն, Միսկին Բուրջուն, Աշուղ Ղաղարին, Քիչիկ Նովսային, Ղալամ Ողլուն, Աշուղ Քյանհանին, Քեչիշ Ողլուն ու Զիվանուն՝ նա կրօնական բաղմաթիվ վոտանավորների շարքում հորինում եր նաև Եջմիածնի հայտնի գովքը :

կան հրապարակ վոտք դրեց արևելահայ անդրանիկ բա-
նաստեղծը, վար չի աղոթում, անկրոնն պետութիւն— Այլի-
տիք իսահակյանը:

Իսկ 20-րդ դարի առաջին տասնամյակում արդեն
դողանջում ելին խիզախ յերգերը հայ բանվորական
գրականութեան հիմնադիրներից մեկի— բանաստեղծու-
հի Շուշանիկ Կուրղինյանի, վոր քրիստոնեյութեան սո-
ցիալական սկզբունքների ու հավատալիքների դեմ ծա-
ռացած աղաղակում եր գայրույթով:

Հե՛տ տար քո խաչը... Հեա տար մորեանդ
Կեղեքիչների ղենքը քառաթեմ,
Վոր պաշտօնից յերկար, յերբ ամեն անգամ
Տնքում եր մարդը մաքով կո՛ւյր, անթե՛...
Հե՛տ տար... նրանից արյունն է ծորում,
Վաղում արցունքի, շարավի հեղեղ,
Բյուրավոր անթիւ զոհերի լքում—
Ղողանջում մահվան նզովքով ահեղ...

XVII

Սակայն բարերախտարար Հովհաննիսյանի սերը
միշտ քարացած, անշարժ չի մնում, այլ զարգանալով
յերբեմն դառնում է վոչ-սեր:

Խալարի մեջ դու վառվեցար, վորպես կանթեղ,
Վառ պահեցիր մեր սրտերում կայծն յերկնային,
Անփասունակ ստրուկ յերկրի դու լուսապեղ
Անչեջ փարոս աղատութեան, Եջմիածին:

Այս գիծը իդեոլոգիապես չէր բախարարի մոչ միայն պոզի-
կյանին կամ թոնրակեցուն, մոչ միայն նալբանդյանին, կամ
Թոթաձախյանին, այլև Ռաֆֆուն (համա. զաղափարական ավա-
ղակներ Քիթար-Դալլուսու և Դալի-Բարայի ճտերը «Ջարայեղ-
դինի» մեջ), մինչև անգամ Պեչիկթաշյանին (համա. սրա «Յեղ-
րայր եմք մեք») ու Պատկանյանին (համա. սրա «Տաճկահայե-
րի սրհաս»):

«Կուխին և բոլոր իրերի ու յերևույթների հայրն ու թագավորը», — ասել և հելլեն փիլիսոփան, Հերակլիտ Մթինը:

Հովհաննիսյանը մասձողության ու վոզևորության ամենապայծառ բողոքներում մեկ-մեկ գիտակցում և այս ճշմարիտ ու անհղ խոսքի վսեմ նշանակությունը: Դեն նեակյով լծարեր սիրո քարոզչի սևաթուշր պարեզոտը՝ նա կայտառելով հազնում և լծակործան ատելության յերգչի արյունավառ ծիրանին՝ այս անգամ արդեն հարելով վոչ թե պատրե Ալիշանին, այլ իմաստուն պատանի Դուրյանին ու փորձառու գինվոր Պատկանյանին:

Սրանցից Դուրյանին և պատկանում այն սարկատիկ միաբը, թե քրիստոնեյության հիմնական պատվիրանը — «սիրեցեք միմիանց» — հենց Գողգոթայի ժայռերի մեջ ել մարեց և չքացավ հավիտյան: Դուրյանինն ևն այն ազգեցիկ տողերը, վորտեղ նա նկարագրելով սոցիալական՝ ահռելի հակասությունները, հարստի ու աղքատի ապրուստի ու վախճանի անդնդային տարբերությունը՝ հանձարեզորեն ու հերձվածոզարար յեզրակացնում և.

Կայծակնաթե թե մռնչեն նոճիներ,
Թե «սիրեցե՛ք գիրար» — հեքն հոս չե՛ն սիրեր:

Իսկ Պատկանյանը, վորի տարերքը կուխն եր, շատ լավ եր հասկանում, թե չարագործներին չի կարելի բնկճել մեղմությամբ: Սերը հաշտության ու հնազանդության նախադուռն ե: Խեղճերի ու զրկվածների որակարգի մեջ պետք ե գնել ատելությունը, վոր առաջնորդում ե դեպի բմբոստություն ու քաջարի մարտ: Վոչ թե վերացական, համատարած սեր, այլ կոնկրետ, դեպիկատիկական սեր, վոր ատելությունը չի ժխտում, այլ, բնդհակառակը, խրախուսում ե իրրե հրամայական

դարտականություն: Վոչ թե սեր—սեր, այլ սեր—տեխություն: Այս մտայնությամբ Պատկանյանը գրում է յօր հոշակալոր յերկաողը:

Սիրելի դիտես, դիացի՛ր, դիացի՛ր դու ատել,
Ինչ վոր հոգիդ վկայում է ատելի:

Հովհաննիսյանի գեռ անդրանիկ վոտանավորն—րում, թեև թույլ, բայց այնուամենայնիվ նկատելի յնն ատելության հուսատու սաղմեր:

Յերանի նրան, վոր սեր է ազատ
Յուր զգացմունքներին—սիրելի է ատել,
Կարող է սերը վողջունել ժպտով
Յեվ նախատելով մերժել անդութին:

Կյանքի փորձը բանաստեղծին որեցոր համարում է, վոր սիրո սրնգով անհնարին է թուլել չարաթույն խեղճին ու զոհակուլ վիշապներին, այլ անհրաժեշտ է նրանց արյունամած յերախների դեմ շեշտակի կարկառել հերոսական կուլի բոցավառ խանձողը:

Ճկուիլ է այս կյանքն», — ազդարարում է պոետն զդատուացած. —

Յեվ քանի վառ է, չե հանդել կրակ,
Հառա՛ջ, միշտ հառա՛ջ, ընկեր թանկադին,
Կյանքն իրբև հեղեղ կոհակ առ կոհակ
Շարժվում է, փրկում միայն քաջերին:

Յեվ բանաստեղծը, վոր վոդևորվում եր միջնադարի իդեալով, Գողգոթայի հլու խաչեցյալով, հիմա աչքերն ուղղում է հեթանոսական հնադարի իդեալին, դեպի Կովհասյան լեռները, վորոնց ծերպերի մեջ ուրվազմվում է վեհափառ կերպարանքն ըմբոստ տիտանի, Պրոմեթևոսի, վոր ընդվզել եր վոչ թե աննշան տիրանիկների դեմ, այլ տիեզերական բռնակալի—վոլիմպադահ ու ամպրոպազեն Զեվսի դեմ. —

Մասայամիտ սպասարկուներդ աթուռդ
 Հայր և արքա տան, ով Ձեզքս, թեզ անուն,
 Թող քո առաջ առատ կնդրուկ միշտ ծխեն,—
 Ձե՛ ահուելի քո զորությունն ինձ համար...
 Բայց դու գիտցիր, կործանելով իմ մարմին՝
 Յերբեք իմ գործն ել սպանել չես կարող.
 Մարդկանց աչերն յես բաց արի, տվի լույս
 Նոցա խավար ստրկացած խեղճ մաքին.
 Յեզ կտեսնես, վոր կզա որ, և նոքա,
 Վոր սարսափում, դողում եյին առաջիդ,
 Կծանակեն հպարտությամբ քո շանթեր
 Յեզ կիմանան, վոր ամպերով միշտ ծածկված
 Գահդ անառակ պիղծ վորջի մեջ ե կանգնած:
 Որը կզա, կխորտակվի Վոլիմպոս,
 Յեզ լուռավոր յերկնքի տակ թե առած
 Կսավառնի ազատության վեհ հողին:

Հայանի յե, թե մարդկության նորագույն պատմու-
 թյան հանճարներից մեկը— Մարքսը, բուրժուական
 Ձեզքսի դեմ ծառայած այս նոր տիտանը—վորջան կը
 վողևորվում Պրոմեթեոսի յերգչով, Եսքիլոսով*) և
 ընդհակառակը խարազանում քրիստոնեյության գա-
 ղափարները:

«Քրիստոնեյության սոցիալական սկզբունքները,—
 ասում եր նա,— արդարացնում եյին անտիկ աշխարհի
 ստրկությունը, փառաբանում եյին միջնադարյան ճոր-
 տատիրությունը և հարկ յեղած դեպքում կարող են,
 թեկուզ և խղճուկ ծամառություններով, պաշտպանել
 պրոլետարիատի արդի հարստահարությունը: Քրիստո-
 նեյության սոցիալական սկզբունքները փառաբանում են
 յերկյուղածությունը, ինքնարհամարհանքը, ինքնանը-
 վաստացումը, հպատակումը, հեղությունը, մի խոս-
 քով, բոլոր հատկությունները խուժանի. այն ինչ պրո-

*) Պոլ Առնալդի ու Ֆրանց Մերինդի ասելով՝ նա ամեն
 տարի նորից ու նորից կարդում եր Եսքիլոսի հունարեն սկզբնա-
 գիրը:

լետարիատի համար, վորը չի ցանկանում, վոր յուր հետ
վարվեն, ինչպես մարդկության թափթփուկի հետ,
սրբոլետարիատի համար համարձակությունը, ինքնա-
գիտակցությունը, հպարտության ու անկախության
զգացմունքն ավելի կարևոր են, քան հացը»:

Պրոլետարների աչքում, նրանց աչքում, վորոնց
համար համարձակությունը, ինքնազիտակցությունը,
հպարտության ու անկախության զգացմունքն ավելի
կարևոր են, քան փորախորշը սողեցնող լափը, — նրանց
աչքում, իրենց մեծ ուսուցչի սովորեցրածի ու հորդորա-
ծի համաձայն, անշուշտ մեծ արժեք ունեն և կունենան
թե՛ այն գաղափարական տիպերը, վորոնք սրբազան
ատելության աննկուն մարտիկ են յեղել անցյալում, և
թե՛ այն գրվածքները նախորդ շրջաններից, վորոնք
սողորված են ազատարար ըմբոստության վողով:

Հույն պոետի ավյունից վարակված Հովհաննիս-
յանի «Պրոմեթեյս» մենախոսությունն ու հանուն իդեա-
լի գրված նրա մի քանի վողեպնդիչ բանաստեղծություն-
ները համամարդկային այն վսեմ յերկերից են հենց,
վորոնք անդորրաալաց ու մրրկախինդ արիներին նշում
և քաշում են դեպի մարտական իդեալի այն լուսավա՛ռ
ու արեամո՛տ բարձունքները, վոր այնքան հմայիչ
յերգել և չքնաղածիր պոետը՝ դալիքի նոստալգիան
սրտում:

Ավելի՛ կարծրանան թող այս սև ժայռեր,
Ավելի՛ թող սպառնա անդունդն ահավոր,
Դեռ շունչ կա բերանումս, շարժվում են ձեռքեր,
Դեպի վե՛ր, սարն ի վե՛ր, սվ արի՛ վինվոր:

Դեռ հեռու յե կատարն անամպ ու հստակ,
Բայց յեթե չհասնենք այնտեղ մենք այսոր,
Վաղն այնտեղ ենք անշուշտ, մերն ե հաղթանակ-
Դեպի վե՛ր, սարն ի վե՛ր, անվեհ՛ե՛ր վինվոր:

Թ Ա Դ. Ա Վ Դ Ա Լ Բ Ե Գ Յ Ա Ն Ի

ՏՊԱԳՐՎԱԾ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ի Ի Ն Ք Ն Ո Ւ Բ Ո Ւ Յ Ն

Ա. ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ – ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ.

1. Միջավայրի քեորիան (*«Գեղարվեստ» Հանդես, Թիֆլիս, 1909, № 3*).
 2. Կարլ Մարքսի տնտեսական զարգացման քեորիան. Ա. *ուլազրություն, Յերևան, 1925, Բ. ուլազրություն, Յերևան, 1926*.
 3. Золото в схемах простого воспроизводства. Эривань, 1929
 4. Издержки обращения в схемах простого воспроизводства. Эривань, 1930,
 5. К вопросу о золоте в схемах простого воспроизводства. Эривань, 1930,
 6. «Վոսկիին փարզ վերարտադրության սլեխմաներուն» գրքույկի մասին. *պատասխան Վ. Պողոսյանի (Էնոր սուղի» ամսագիր, Յերևան, 1929, № 11—12)*.
 7. Основные схемы расширенного воспроизводства. Эривань, 1931,
 8. Развернутая схематическая таблица простого воспроизводства социалистического хозяйства. Эривань, 1931.
- Բ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱՅԻ ՈՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
9. Նոր Բայազդի նորագույն սեպագիրն ու նրա հնագիտական միջավայրը. *Յերևան, 1927*.
 10. Յերկու եջ Հայաստանի վոռոզման պատմությունից ու նրանց գործնական հետևանքները. I. Նորատուսի առու, II. Գավառանո առու. *Յերևան, 1927*.

11. Նոր Բայազիդի երկն առուներն ու շրջակայքի վտոռգման հեռանկարները. *Յերևան*, 1931.
12. Հայ շինականի ու գեղջկուհու աշխատավարձը հիմնարար դարում (*«Տեղեկագիր Գիտության և Արվեստի Ինստիտուտի»*, *Յերևան*, 1928, № 3).
13. Հաս, սակ ու բաժ. Հայաստանի տնտեսական զարգացման խնդիրները շուրջը. *Յերևան*, 1926.
14. Մի գաղտնիք հայ վիմական արձանագրությունների մեջ ու նրա նշանակությունը Հայաստանի տնտեսական զարգացման պատմության համար. *Յերևան*, 1927.
15. Բահրան ու մյուսքը XVII ու XVIII դարերում (*«Նորք» Հանդես*, *Յերևան*, 1923, Բ. դիրք).
16. Յերկրագործական հավելյալ արդյունքի նորման XVII ու XVIII դարերում ու XIX-ի սկիզբներում «Նորք» *Հանդես*, *Յերևան*, 1923, Գ. դիրք).
17. Հայաստանում բամբակագործությունը վերականգնելու և ընդլայնելու հնգամյա պլան 1924—1929 թ. թ. (*«Վերելք» Հանդես*, *Յերևան*, 1924, № 4—5):

Գ. ՀԱՅ ՀԱՆՐԱՅԻՆ ՄՏՔԻ ՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

18. Միերը հայոց մեջ. *Վիեննա*, 1929.
19. Անհայտ ազանգավորներ հայոց մեջ XVI ու XVII դարերում. *Վիեննա*, 1926.
20. Հայ ուղտագրական շարժման յերկու հոսանք XVIII դարի վերջերում. (*«Նորք» Հանդես*, *Յերևան*, 1922, Ա. դիրք).
21. Շահամիր Շահամիրյանն ու հնդկահայոց համայնական ինքնավարությունը XVIII դարում. (*«Տեղեկագիր Գիտության և Արվեստի Ինստիտուտի»*, *Յերևան*, 1930, № 4).
22. Ֆրանսական մեծ հեղափոխությունն ու ժամանակակից հայերը. (*«Նորք» Հանդես*, *Յերևան*, 1924, Գ. դիրք).

23. Ասաջին գաղտնիքական անգամը հայոց մեջ. Մերկե-կու-
լարի Տեր-Մգրախ. 1791—1792 թ. թ. (տպա-
գրված է իբրև հավելված «Արսեն Թոխմախ-
յանի»).
24. Հայ անդրանիկ պարբերականն ու նրա խմբագիրը («Վերելք»
հանդես, Յերեվան, 1924 № 2—3).
25. Խաչատուր Արուսյան. գրական-պատմական վերլուծություն,
Վաղարշապատ, 1910.
26. Միֆայել Նալբանդյան. գրական-պատմական վերլուծու-
թյուն, Ա. տպ. Վաղարշապատ, 1913, Բ. տպ.
Յերեվան, 1928.
27. Մերկանտիլիզմը հայոց մեջ («Հորիզոն» որաթերթ, Թիֆլիս,
1913, № № 268 ու 269).
28. Հանգույցի լուծումը. Միքայել Նալբանդյանի աշխարհահա-
յացքի բնորոշման խնդրի շուրջը («Հորիզոն»
որաթերթ, Թիֆլիս, 1914, № № 6, 10,
16 ու 21).
29. Արսեն Թոխմախյան. գրական-պատմական ակնարկ, Յերե-
վան, 1926.
30. Շիրվանգադեյի վեպերի մյուսքը («Արարատ» ամսագիր, Վա-
ղարշապատ, 1910, № № 4 ու 5).
31. Հովհաննես Հովհաննիսյան. գրական-պատմական վերլուծու-
թյուն, Յերեվան, 1934.
32. Հոգի վիշտը Մուրացանի յերկերում. գրական-պատմական
վերլուծություն, Վաղարշապատ, 1911.
33. Հայ գյուղը Հովհաննես Թումանյանի յերկերում. գրական-
պատմական ակնարկ, Յերեվան, 1924:

Գ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ—ԲԱՌԱՐԱՆԱԳՐԱԿԱՆ

24. Գրուտերի որագրից. ա. Մեհրուժան Աթրուշու զայրույթը.
բ. Նորից կորյունը Վրաստանի եպիսկոպես չե
յեղել. գ. Կունդ Արամազդ. դ. Կողմն Սեպհա-
կան զեղին = Վասպուրական. ե. Յերեվանը
Սերեոսի «Պատմության» մեջ. (տպագրված է
իբրև հավելված «Անհայտ աղանդավորներ»
զբնույթի).

35. Կարծեցյալ Շապուհը. «Պատմութիւն Շապհոյ Բաղրատունւոյ» գրքի հեղինակը վորոշելու խնդրի շուրջը («Բանբեր Հայաստանի Գիտական Ինստիտուտի» գիրք Ա—Բ. Վաղարշապատ, 1921—1922) .
36. Սիմեոն Կարուղիկոսի հիշատակարանի ծածկագիրը («Բանբեր Հայաստանի Գիտական Ինստիտուտի», գիրք Ա—Բ. Վաղարշապատ, 1921—1922) .
37. «Կոմմունիստական Մանիֆեստի» հայերեւոյս քարգամաւորւթյունները 1887—ից մինչև 1924 թ. («Վերելք» հանդէս, Յերեւան, 1924, Ա 4—5) .
38. Ռուս-հայերեւոյս տնտեսագիտական տերմինաբանական բառտետր (տպագրւած է իբրև հայկերէն Տյումենիի «Աշխատանքի պատմութեան» հայերեւոյս թարգմանութեան Ա. Բ. ու Գ. հրատարակութեան մեջ) .
39. Ռուս-Հայերեւոյս Նոր Բառարան. Ա. հատոր, Ա—Ի. (Պ. Սոսնիկյանի, Յե. Տեր-Մինասյանի ու Վ. Փոթեյանի հետ միասին), Յերեւան, 1933 (Բ. հատորը, Օ—Պ, մամուլի տակ է) :


Ո Ւ Մ Բ Ա Գ Բ Ա Ն

40. Կարլ Մարքս «Վարձու աշխատանք ու կապիտալ» . Թարգմ. Ստ. Շահումյանի, Բ. տպ. Յերեւան, 1921 (Պետհրատի անդրանիկ, № 1 հրատարակութեանը) .
41. Ռուս-հայերեւոյս իրավաբանական բառարան (Հ. Աճառյանի ու Հովհ. Հովհաննիսյանի հետ միասին), Յերեւան, 1924 .
42. Ռուս-հայերեւոյս աշխատանքային բառարան վ. Փոքեյանի (Խմբ. Յե. Տեր-Մինասյանի ու Վ. Փոթեյանի հետ միասին), Յերեւան, 1931 .
43. Հակոբ Պարոնյան «Յերկիրի լիակատար ժողովածու» Ա. հատոր (Մ. Արեղյանի, Գ. Լեոնյանի, Յ. Սանդաղյանի ու Ա. Տերտերյանի հետ միասին), Յերեւան, 1931 :

44. Ա. Իսայև «Անհատն ու միջավայրը—Հիսուս, Դարվին ու Մարքս» (ՎՄՍՐՃ՝ *ամսագիր*, 1907, № 4, *ապրիլ*) .
45. Բերդնիկով և Սվետլով «Քաղաքական գրագիտության դասընթաց», Ա. մաս, *Յերևան*, 1926 .
46. Ա. Տյումենև «Աշխատանքի պատմությունը», Ա. *ուս. Յերևան*, 1924, Բ. *ուս. Լենինական*, 1925, Գ. *ուս. Յերևան*, 1927 .
47. Ֆ. Միխայևսկի «Քաղաքատնտեսություն», *Յերևան*, 1928 .
48. «Հայաստանի ավտոնոմիան» և Անտանտան. *Վալերադրեր իմպերիալիստական պատերազմի շրջանից. Յերևան*, 1926 .
49. Ա. Դեբարին «Մարքսիզմը, Լենինն ու կուլտուրան» (ՎԿԵՐԼՔ՝ *Հանդես*, *Յերևան*, 1924, № 4—5) .
50. Ն. Լենին «Պարենիարկի մասին», *Վաղարշապատ*, 1922 .
51. Վ. Ի. Լենին «Սոցիալիստական հեղափոխությունը և լուսավորության խնդիրները», *Յերևան*, 1925 .
52. Վ. Ի. Լենին «Իմպերիալիզմը իբրև կապիտալիզմի նորագույն ետապ», Ա. *ուս. Յերևան*, 1926, Բ. *ուս. Յերևան*, 1934 .
53. Վ. Ի. Լենին «Նոր տնտեսական փառափայլանություն», *Յերևան*, 1926 .
54. Քաղաքատնտեսության հարցեր. *Քրեստոմատիա ըստ Լենինի, խմբ. Շ. Մ. Դյուլազկու*, *Յերևան*, 1929 .
55. Վ. Ի. Լենին «Արհեստակցական շարժման մասին», *Մոսկվա*, 1930 .
56. Վ. Ի. Լենին ա. Ֆարիկաներում ու գործարաններում բանվորներից գանձվող տուգանքների վերաբերյալ որեմքի բացատրությունը. բ. Գիմնագիական տնտեսությունները և ուղղիչ գիմնագիաները. գ. Ֆրիդրիխ Ենգելս. դ. ԻՊչի՞ մասին եմ մտածում մեր մինիստրները. ե. Սոցիալ-դեմոկրատական կուսակցության ծրուգրի նախագիծն ու

բացատրությունը. (տպագրված են Լենինի
«Յերկերի» լիակատար ժողովածույի Ա. հատորի
հայերեն հրատարակության մեջ), Յերեվան,
1930 (սրահչից «Ֆրիդրիխ Ենգելը» տպված է
Նաև իբրև առանձին զրգույկ, Յերեվան, 1931) .

57. Վ. Եսլզիմ Մարքսն ու Ենգելսն իրենց մանկավարժական
ասույթներում», Յերեվան, 1928 .
58. Ֆ. Մերինգ ու Ռ. Լյուքսեմբուրգ «Կարլ Մարքսի «Կապի-
տալի» համառոտ շարադրամբը», Յերեվան,
1924 .
59. Կ. Մարքս «Քաղաքատնտեսության ֆննդատության շուր-
ջը», Յերեվան, 1932 ու վերջապես .
60. Կ. Մարքս «Կապիտալ», Ա. հատոր, Յերեվան, 1933 :




50523

Տաճ. Ավճալբեցյան
ՕՎԱՆԵՍ ՕՎԱՆԻՏՅԱՆ

Իստորիկո-լիտերատուրայի օՊԱԱ Հիմնարար Չիտ. Չրադ.

Հեղինակի հասցեն՝ Յերիվան, Լիբանոնյան



220050523